Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1003-19.10.2010,07.02.2011-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել <<Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 2001թ. հունիսի 26-ի ՀՕ-199 օրենքը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

Նախագիծ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
_____ օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համաձայն «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2007թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» թ.ՆՀ-37-Ն հրամանագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008թ. հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թ.1207-Ն որոշման հիմնադրույթներին համապատասխան:

2. Ծրագրի հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ) օժանդակությամբ մշակված «Կրթություն-2015 » զարգացման հայեցակարգը:

3. Հիմք ընդունելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով ոլորտի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումներն սկսվել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում:

5. Ավելի քան տասը տարվա ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին լուծել համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնել իրավիճակը և նախադրյալներ ստեղծել զարգացման համար: Այդուհանդերձ, կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից, մինչդեռ առաջ են եկել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան:

6. Բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արժևորվող ձեռքբերումների բացակայության պատճառով կրթության համակարգը հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վստահությու՛նը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ: Միաժամանակ, թե՛ հասարակական գիտակցության, թե՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

7. Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

2.1. Կրթության մատչելիությունը և մասնակցությունը

8. Կրթության համակարգի հիմնական բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները, որոնց հիմա վրա կարելի է դատել այս կամ այն սոցիալական խմբի համար կրթական ծառայությունների մատչելիության մասին:

9. **Մատչելիության առումով ամենախոցելին նախադպրոցական կրթությունն է:** Ներկայումս հանրապետության 400-ից ավելի համայնքներում չկան նախադպրոցական հաստատություններ (ՆԴՀ) , իսկ նախադպրոցական ծրագրերում համախառն ընդգրկվածությունը 2009 թվականին կազմել է ընդամենը 24.3% (քաղաքային համայնքներում՝ 31.5%, գյուղական համայնքներում՝ 11.7%): Կարևորելով նախադպրոցական կրթության դերը, երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար մեկնարկային պայմաններ

ստեղծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թվականին հաստատել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը» (Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008թ. մարտի 13-ի նիստի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական և փորձնական ծրագրերին հավանություն տալու մասին» թ.10 արձանագրության 13-րդ կետ), որը ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նպատակադրում է մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ ՆԴՀ-ներ չեն գործում:

Աղյուսակ 1. Համախառն ընդգրկվածությունը ՆԴՀ -ներում՝ ըստ քաղաքային և գյուղական համայնքների

Տարեթիվ	ՆԴ հաստատությունների թիվը			Ընդգրկված երեխաների թիվը			Ընդգրկվածություն, %		
	ընդամենը	քաղաք	գյուղ	ընդամենը	քաղաք	գյուղ	ընդամենը	քաղաք	գյուղ
2004	653	422	231	45971	37993	7978	20,0	27,4	8,7
2005	645	429	216	48674	40317	8357	21,8	29,7	9,6
2006	645	417	228	48015	39161	8854	21,8	29	10,5
2007	637	415	222	50491	42102	8389	23,3	31,1	10,3
2008	628	412	216	53718	44736	8982	29,8	39,3	13,6
2009	599	380	219	53161	43640	9521	24.3	31.5	11.7

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2005-2009թթ.:

10. **Հայաստանում հանրակրթության մեջ ընդգրկվածության էական խնդիր չկա:** Համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում բավականին բարձր է. վերջին տարիներին այն միջինում կազմել է մոտ 90%: Հիմնական կրթության համակարգում ընդգրկվածությունը 2009 թ. կազմել է 92.1%, որը միատարր է տարածքային, գենդերային ու աղքատության խմբերի առումով, և այս իմաստով էական անհավասարություններ չկան: Միևնույն ժամանակ, ավագ դպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է՝ 2009 թ. 83.9% (տե՛ս գծապատկեր 1): Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ հիմնական կրթությունից հետո սովորողների մոտ 10%-ն ուսումը շարունակում է նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում: Այսինքն, ավագ դպրոցում ընդգրկվածության ցածր մակարդակը դեռևս չի նշանակում, որ

սովորողների զգալի մասը հիմնական դպրոցից հետո դուրս է մնում կրթությունից: Այլ խնդիր է, թե սոցիալական որ խմբերի երեխաներն են շարունակում կրթությունն ավագ դպրոցում, այսինքն՝ հավակնում կրթության ավելի բարձր մակարդակի:

Գծապատկեր 1. Համախառն ընդգրկվածությունը հանրակրթության համակարգում,%



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2009 թվականին:

11. **Աղքատ և ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունը ավագ դպրոցում էապես անհավասար է՝** ի տարբերություն հիմնական կրթության: Ավագ դպրոցում ամենահարուստ խմբի համախառն ընդգրկվածությունն ամենաաղքատից 1.3 անգամ ավելի բարձր է: Այսպիսով, հիմնական դպրոցն ավարտելուց հետո հանրակրթական համակարգից դուրս եկածների մեծ մասն աղքատներ են (տե՜ս գծապատկեր 2): Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) տվյալների համաձայն (աղբյուրը՝ Կայուն զարգացման ծրագիր, 2008թ.)՝ եթե հիմնական դպրոցն ավարտողների մեջ ոչ աղքատ 18-19 տարեկանների ընդամենը 2.8%-ի համար է այն ստացած ամենաբարձր կրթամակարդակը, ապա աղքատների շրջանում այն կազմում է 16%: Առավել մտահոգիչ է վիճակը շատ աղքատ բնակչության շրջանում, որը կազմում է 35%: Առանձին գործող ավագ դպրոցների ծրագիրը կարող է խորացնել այս անհավասարությունը, քանի որ ծրագրում ընդգրկված չեն փոքր գյուղական համայնքները, որոնք առավել խոցելի են աղքատության տեսանկյունից:

Գծապատկեր 2. Միջնակարգ և ավագ դպրոցներում ընդգրկվածությունը՝ ըստ քվինտիլային խմբերի



Աղբյուրը՝ «Օգուտների բաշխման վերլուծություն», Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ հասարակական կազմակերպություն, 2010թ.:

12. **Ավագ դպրոցում առկա է նաև գենդերային որոշ անհամամասնություն:** Ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, տարրական և հիմնական դպրոցներում սովորողների շրջանում տղաները գերակշռում են: Սակայն պատկերը փոխվում է ավագ դպրոցում, երբ սովորողների թվաքանակում մեծանում է աղջիկների կշիռը, ինչը փաստում է այն մասին, որ հիմնական կրթությունից հետո առավել հաճախ դպրոցը թողնում են տղաները:

13. **Ամբողջական չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալները:** Ըստ մոտավոր գնահատականների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը հանրապետությունում մոտ 8000 է: Մինչդեռ, հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում և ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաների թիվը մոտ 4000 է: Քանի որ հատուկ կարիքներով երեխաների բացահայտման համակարգը և ներառական կրթությունը դեռևս համատարած ներդրված չէ, միարժեքորեն հնարավոր չէ ասել՝ այդ երեխաները կրթությունից դուրս են մնում, թե հաճախում են հանրակրթական հաստատություններ, սակայն պաշտոնապես ճանաչված չեն որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

14. Ըստ դպրոցից աշակերտների բացակայության ուսումնասիրության արդյունքների («Ուսումնասիրություն Հայաստանում աշակերտների՝ դպրոցից բացակայությամբ պայմանավորված դպրոցական ռեսուրսների կորուստների վերաբերյալ»: Հայան Հուա, Երևան, 2008թ.)՝ **դպրոցից դուրս մնալու դեպքերը**

բազմաթիվ այլ զարգացած և զարգացող երկրների համեմատությամբ քիչ են եղել, սակայն տարեցտարի աճել են: 2002 - 2004 թվականներին դպրոց չհաճախող երեխաների ընդհանուր թիվը կազմել է համապատասխանաբար 1531, 4823 և 7630, իսկ դպրոց չհաճախելու ցուցանիշը՝ 0,3%, 1,0% և 1,6%: Նշված երեք տարվա ընթացքում դպրոց չհաճախելու դեպքերի թվի աճը միջին հաշվով տարեկան կազմել է 250%: Դպրոցից դուրս մնալու հետևանքով 2008 թվականին տարրական դպրոցն ավարտողները կազմել են համապատասխան տարում դպրոց ընդունվածների 97.2%, իսկ հիմնական դպրոցն ավարտողները՝ 96.4%: Այս երևույթների պատճառները լրացուցիչ ուսումնասիրման և համապատասխան կանխարգելիչ միջոցառումների կարիք ունեն, քանի որ Հայաստանը Հազարամյակի զարգացման 2-րդ նպատակի համար սահմանել է, որ մինչև 2015 թվականը համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում պետք է հասնի 99%, իսկ ավագ դպրոցում՝ 95%:

15. **2001 թվականից ի վեր մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշները հաստատուն կերպով աճել են, սակայն դրանք դեռ ցածր են** Կենտրոնական և Արևելյան Եվրոպա **(ԿԱԵ) և** Անկախ պետությունների համագործակցություն Անկախ պետությունների համագործակցություն **(ԱՊՀ) երկրների ցուցանիշների համեմատությամբ:** 2006 թ. համախառն ընդգրկվածությունը մասնագիտական ծրագրերում կազմել է մոտ 38%, ընդ որում միայն բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակներում՝ մոտ 28%՝ 2003 թ. 21.3%-ի համեմատ (ըստ 2004 թ. տվյալների՝ ԿԱԵ ու նախկին Խորհրդային Միությan երկրներում՝ 43%):

16. **Աղքատների, հատկապես ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունը բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում շատ ցածր է:** Աղքատների ընդգրկվածության ցուցանիշը 5.4, իսկ ծայրահեղ աղքատներինը գրեթե 8 անգամ ցածր է ոչ աղքատ բնակչության ցուցանիշից (տե՛ս գծապատկեր 3): Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում աղքատ և ծայրահեղ աղքատ բնակչության ընդգրկվածությունն ունի նաև տարածքային անհամամասնություն՝ հօգուտ մայրաքաղաքի: Մարզերի աղքատ բնակչության շրջանում այն 2.1, իսկ գյուղական համայնքներում 4.3 անգամ քիչ է:

Գծապատկեր 3. Համախառն ընդգրկվածությունը մասնագիտական կրթական ծրագրերում՝ ըստ աղքատության խմբերի



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ) ՏՏԿԱՀ, 2005թ.:

17. Աղքատների՝ բարձրագույն կրթության ոլորտում ընդգրկվածության նման ցածր մակարդակը պայմանավորված է ոչ միայն վճարովի համակարգում ուսման բարձր վարձավճարներով, այլև սոցիալական մի շարք գործոններով, որոնք առնչվում են ընդունելության քննություններին նախապատրաստման և ուսումնառության ընթացքում անհրաժեշտ այլ ծախսերով: Այն ընտանիքները, որոնք ունեն ավագ դպրոցում սովորող աշակերտ, մասնավոր պարապմունքներին հատկացնում են կրթության վրա կատարված ընդհանուր ծախսերի 73%-ը, մինչդեռ ամենաաղքատ քվանտիլի բնակչության սպառումը 12.2 անգամ զիջում է կրթության ոլորտի ծառայությունների միջին մակարդակին: Հարուստ ընտանիքներն ավելի շատ են ծախսում կրթության համար, հատկապես՝ մասնավոր պարապմունքների կամ կրկնուսույցների վրա, այն դեպքում, երբ աղքատ բնակչությունը չունի այդ հնարավորությունը:

2.2. Կրթության որակը և համապատասխանությունը

18. Կրթության որակի բարելավման ուղղությամբ զգալի առաջընթաց է արձանագրվել՝ հատկապես հանրակրթության ոլորտում: Ներդրվել է 12-ամյա կրթակարգը, վերանայվել և արդիականացվել են ուսումնական ծրագրերը, ներդրվել է դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության միասնական քննական թեստային համակարգը, իրականացվել է ուսուցիչների լայնածավալ վերապատրաստման ծրագիր՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ, բարելավվել է դպրոցների

համալրվածությունը համակարգչային սարքավորումներով և ինտերնետ հասանելիությունը, ընթացքի մեջ է ավագ դպրոցների ցանցի ձևավորման և հզորացման ծրագիրը: Բոլոնիայի և Կոպենհագենի գործընթացների սկզբունքներին համապատասխան իրականացվում են մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական ստանդարտներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը: Մասնավորապես վերանայվել են մասնագիտական կրթության չափորոշիչները, ներդրվել է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը, ստեղծվել է մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, մշակման փուլում են որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերը, մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) ոլորտի զարգացման ծրագրի շրջանակում 12 քոլեջներ համալրվել են նոր լաբորատորիաներով և տեխնիկական սարքավորումներով: **Չնայած զգալի առաջընթացին, կրթության բոլոր մակարդակներում որակը շարունակում է մնալ գլխավոր հիմնախնդիրը**:

2.2.1. Որակի արդյունքային ցուցանիշները

19. Թեև վերջին տարիներին կրթության որակի հիմնախնդիրն առավել շատ քննարկվող հարցերից մեկն է, սակայն մինչ այժմ **որակի վստահելի և արժանահավատ արդյունքային ցուցանիշների համակարգ ներդրված չէ:**

20.Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման համակարգը դեռևս մշակման փուլում է, իսկ ավարտական և միասնական քննությունների մինչ այժմ ստացված արդյունքները բավարար չեն կրթության արդյունքի իրական որակը գնահատելու համար: Սա պայմանավորված է նրանով, որ նույն առարկայի համար տարբեր տարիներին, ինչպես նաև նույն տարում տարբեր առարկաների համար կիրառված թեստերը համարժեք չեն, իսկ ավարտական և միասնական քննություններն անցկացվում են տարբեր ընթացակարգով:

21. Հանրակրթության որակի առավել վստահելի առկա ցուցանիշը Հայաստանի դպրոցականների՝ մաթեմատիկայի և բնական գիտությունների բնագավառներում ձեռքբերումների միջազգային գնահատման մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների հետազոտություն (ԹԻՄՍՍ, TIMSS) արդյունքներն են, որին Հայաստանը մասնակցել է 2003 և 2007 թվականներին: 2007 թվականին Հայաստանն արձանագրեց աննախադեպ առաջընթաց 2003 թվականի համեմատ (տե՛ս Աղյուսակ 2): Գրեթե բոլոր ցուցանիշներով Հայաստանը զբաղեցրեց միջին դիրք՝ առաջ անցնելով եվրոպական շատ երկրներից:

22. Կրթության որակի կարևոր ցուցանիշ է նաև շահառուների բավարարվածության աստիճանը: Ըստ «Գլոբալ տնտեսական ֆորումի» 2009-2010թթ. հաշվետվության՝ Հայաստանը 133 երկրների շարքում տարրական կրթությունից բավարարվածության 3.3 ցուցանիշով (միջազգային միջինը՝ 3.8, առավելագույնը՝ 7) զբաղեցնում է ընդամենը 81-րդ, իսկ կրթության համակարգի որակի ցուցանիշով՝ 3.0 (միջազգային միջինը՝ 3.8)՝ 105-րդ տեղը: Շահառուների բավարարվածության ցածր մակարդակ է գրանցվել նաև ՏՏԿԱՀ արդյունքներում. թեև 2009 թվականին տնային տնտեսությունների բավարարվածությունը վճարովի կրթական ծառայություններից 2004 թվականի նկատմամբ աճել է 12,0 տոկոսային կետով, այն կազմում է ընդամենը 62.0% (աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2010թ., էջ 197):

Աղյուսակ 2. ԹԻՄՍՍ 2003 և 2007թթ. արդյունքները

		Մաթեմատիկա 4-րդ դասարան	Մաթեմատիկա 8-րդ դասարան	Բնագիտական առարկաներ 4-րդ դասարան	Բնագիտական առարկաներ 8-րդ դասարան
2003	Հայաստան	456	478	437	461
	Միջազգային միջին	495	467	489	474
2007	Հայաստան	500	499	484	488
	Միջազգային միջին	500	500	500	500

Աղբյուրը՝ http://timss.bc.edu :

23. Կրթության որակի բարելավման հետագա արդյունավետ քաղաքականության մշակման կարևոր նախապայման է տվյալների ստացման մեխանիզմների կատարելագործումը, որին ուղղված են որակի ապահովման ընթացակարգերի ներդրումը, կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ընդլայնումն ու զարգացումը:

2.2.2. Դասավանդող անձնակազմը

24. Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է մանկավարժներին: **Քանակական առումով հանրապետությունում մանկավարժների պակաս չկա:** Հանրակրթական դպրոցներում 2009-2010 ուսումնական տարում դասավանդել է 41512 ուսուցիչ (աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվար-մարտին), մեկ ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է մոտ 0.95

դրույք: Նախորդ տարիների համեմատությամբ հանրակրթության ոլորտում աշխատող ուսուցիչների թիվը նվազել է, որը պայմանավորված է ինչպես սովորողների թվի նվազմամբ, այնպես էլ համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներով: Միաժամանակ, սահմանամերձ բնակավայրեր ուսուցիչների գործուղման, մարզերի համար կադրերի նպատակային պատրաստման ծրագրերի, մանկավարժների աշխատավարձի շարունակական բարձրացման քաղաքականության շնորհիվ կադրային ապահովման խնդիրը հանրապետությունում հիմնականում լուծված է:

25. Աշխատող ուսուցիչների համակազմում մանկավարժական կրթությամբ ուսուցիչները կազմել են 89% (նրանցից 85,2%-ը՝ բարձրագույն, 12,7%-ը՝ թերի բարձրագույն, 2,1%-ը՝ միջին մասնագիտական կրթությամբ), իսկ ուսուցիչների աշխատավարձը գերազանցում է մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մակարդակը: Պետական բյուջեից զգալի միջոցներ են հատկացվում ուսուցիչների մասնագիտական կատարելագործման և մեթոդական օժանդակության համար: 2005 թվականից ապահովվել է ուսուցիչների կանոնավոր վերապատրաստումը հնգամյա պարբերաշրջանով: Միաժամանակ, տարբեր կազմակերպությունների կողմից կրթության ոլորտում իրականացվող գրեթե բոլոր ծրագրերում նույնպես առկա են ուսուցիչների վերապատրաստման բաղադրիչներ:

26. Ընդգծելով հանդերձ մասնագիտական կատարելագործման կարևորությունը, անհրաժեշտ է նշել, որ իրականացված վերապատրաստումների արդյունավետությունը հիմնականում չի գնահատվում, իսկ դրանց արդյունքներն էականորեն չեն անդրադառնում մանկավարժների մասնագիտական առաջխաղացման վրա: Ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ուսուցիչների ատեստավորման կարգը կներդրվի 2011 թվականից, որով նախատեսվում են կանոնակարգել ուսուցիչների վերապատրաստումները և դրանց արդյունքները հաշվի առնել ատեստավորման ժամանակ:

27. **Ուսուցչական համեմատաբար փոքր պահանջարկի պայմաններում մանկավարժների պատրաստման ծավալները աճել են, մինչդեռ վերջին տարիներին նկատվում է աշակերտների թվի նվազման միտում:** Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից 6-ում պատրաստում են մանկավարժի որակավորում ունեցող մասնագետներ: Միջին մասնագիտական 81 ուսումնական հաստատություններից 27-ում ևս շնորհվում է մանկավարժի որակավորում: Մանկավարժական մասնագիտություններով բուհեր է ընդունվում տարեկան մոտ 5000 ուսանող, իսկ միջին մասնագիտական ուսումնական

հաստատություններ (ՄՄՈՒՀ)՝ մոտ 1000 ուսանող: Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում մանկավարժական մասնագիտություններով սովորող ուսանողները կազմում են սովորողների ընդհանուր թվի 29.4%-ը, իսկ միջին մասնագիտական կրթության համակարգում՝ 10.8% (աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2008թ.):

28.Միաժամանակ, **ցածր է կրթության որակը մանկավարժական բուհերում**, որը պայմանավորված է մի շարք գործոններով. դիմորդներն ուսման համեմատաբար ցածր առաջադիմություն ունեցող շրջանավարտներն են, բուհերը համալրված չեն ժամանակակից ուսումնական ռեսուրսներով, բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները դանդաղ են ներդրվում այս բուհերում: Մանկավարժների պատրաստման բնագավառում առկա խնդիրների լուծմանն է ուղղված «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի հիմնական բաղադրիչներից մեկը:

2.2.3. Ծրագրամեթոդական ապահովումը և ուսումնանյութական բազան

29.Կրթական ծառայությունների որակի բարձրացման առումով կարևորվում է հանրակրթական դպրոցների ուսումնամեթոդական հենքի արդիականացումը:

30. Հանրակրթության ոլորտի բարեփոխումների առաջին փուլում վերանայվել են ուսումնական ծրագրերը, իրականացվել է դասագրքերի հրատարակման ու սովորողներին դասագրքերով լիարժեք ապահովման գործընթացը, ստեղծվել է «Դասագրքերի շրջանառու հիմնադրամը», և ներդրվել է դասագրքերի շարունակական մատակարարման համակարգը: Իրականացված միջոցառումների շնորհիվ ընդհանուր առմամբ լուծվել է յուրաքանչյուր աշակերտին դասագրքերով ապահովելու հիմնահարցը, բարելավվել է դասագրքերի և ուսուցչական ձեռնարկների բովանդակային և տպագրական որակը, դասագրքերի շրջանառու հիմնադրամի միջոցով ներդրվել է դասագրքերի տպագրության շարունակական մեխանիզմը, կրճատվել են դասագրքերի ձեռքբերման ծախսերը, իսկ առավել խոցելի խմբի աշակերտներին դասագրքերը տրամադրվում են անվճար:

31. «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային առաջին ծրագրի իրականացման ընթացքում ներդրվել է հանրակրթության պետական կրթակարգը, անցում է կատարվել 12-ամյա կրթության: Մշակվել են հիմնական դպրոցի բոլոր առարկաների նոր չափորոշիչներն ու ուսումնական ծրագրերը, նոր ծրագրերի հիման վրա ստեղծվել են դասագրքեր, այդ թվում՝ նաև այլընտրանքային: Ձեռքբերումներն այս ոլորտում ակնհայտ են, սակայն դասագրքաստեղծ

աշխատանքները դեռևս բարելավման կարիք ունեն: Վերջին տասնամյակում հանրակրթական դպրոցներում մշակվել և ներդրվել է 215 անուն դասագիրք, որոնց մի մասի որակը բովանդակային առումով բավարար չէ: Միշտ չէ, որ դրանք գրված են տվյալ տարիքային խմբի համար մատչելի լեզվով, որոշ դեպքերում գերակշռում է ակադեմիական ոճը, փոքր է ուսուցիչների մասնակցությունը դասագրքերի ստեղծման և փորձաքննության փուլերում: Դասագրքերի որակի հետագա բարելավման նպատակով հեղինակային խմբերին ու հրատարակիչներին անհրաժեշտ է ցուցաբերել մասնագիտական աջակցություն, դասագրքեր գրելու հմտությունների և ձևերի զարգացման առումով, մեծացնել ուսուցիչների մասնակցությունը:

32. Միաժամանակ, խնդիր է նաև սովորողների ծրագրային ծանրաբեռնվածությունը: 12-ամյա կրթակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված էր մի շարք հիմնախնդիրների առկայությամբ, որոնցից նշենք սովորողների տեսանկյունից ամենակարևորները. որոշ առարկաների ծրագրերի նյութը խիստ մեծածավալ էր, ուսումնական ծրագրերի համապատասխանությունը արդի պահանջներին բավարար չէր, թույլ էր ուսումնական գործընթացների դաստիարակչական ուղղվածությունը, չափազանց մեծ էր սովորողների ուսումնական բեռնվածությունը և այլն: Նշված խնդիրները հաղթահարելու նպատակով անցում կատարվեց 12-ամյա կրթակարգին, հաստատվեցին նոր առարկայական չափորոշիչներ և ծրագրեր ու դպրոց մուտք գործեցին մի շարք նոր առարկաներ: Փոխվեցին սովորողին ներկայացվող պահանջները՝ նոր որակներ, գիտելիքներ, հմտություններ, կարողություններ և արժեքներ: Սովորողների շրջանում դաստիարակության վարկը բարձրացնելու, կրթությունը ժամանակակից տնտեսության և հասարակության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ներդրվեցին նաև նոր առարկաներ՝ էկոլոգիական կրթություն, ՏՀՏ, հասարակագիտություն, տնտեսագիտության հիմունքներ և այլն: Արդյունքում, բնավ չթեթևացավ սովորողի ուսումնական բեռնվածությունը էապես չթեթևացավ: Այժմ էլ հանրակրթության ոլորտում, հատկապես ավագ դպրոցում ծրագրային օպտիմալ ծանրաբեռնվածության, հանրակրթության չափորոշչի, առարկայական ծրագրերի ու դասագրքերի փոփոխման ու ուսումնական նյութի վերաբաշխման անհրաժեշտությունը շարունակում է մնալ հանրակրթության որակի բարելավման կարևոր մարտահրավեր:

33. Հանրակրթության ոլորտի կարևոր խնդիրներից է նաև ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության

տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրումը, հանրակրթական դպրոցների համալրումը արդիական համակարգչային միջոցներով և որակյալ ինտերնետային կապով:

34. Ուսումնական գործընթացն արագորեն հագեցվում է ՏՀՏ-ով, ուսումնական հաստատություններում դրանք կիրառվում են պարտադիր առարկաների ուսուցման գործընթացում՝ որպես դասավանդման ու ուսուցման նոր միջոց, ստեղծվել է շարժական ինտերնետային-համակարգչային կայանը: Ընդհանուր թվով ինտերնետին միացված են հանրապետության շուրջ 1180 դպրոցներ: Ներկայումս «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում» ընդգրկված է 936 դպրոց, որը կազմում է ինտերնետին միացված հանրակրթական դպրոցների ընդհանուր թվի 79.3%-ը: Նախատեսվում է, որ առաջիկա տարիներին հանրապետության բոլոր դպրոցները կմիանան այս ցանցին: Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցներում հիմնվել են էլեկտրոնային գրադարաններ՝ 19 էլեկտրոնային ձեռնարկներով, իրականացվել է հեռահար ուսուցման ներդրման փորձնական ծրագիրը: Դպրոցների մեծ մասը համալրվել է համակարգչային սարքավորումներով, ստեղծվել է «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալը: Նախատեսվում է ընդլայնել հանրակրթական հաստատություններում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ուսուցման նոր տեխնոլոգիաները հասանելի դարձնելով հանրապետության բոլոր դպրոցների համար՝ անկախ դրանց աշխարհագրական դիրքից: Աշխատանքներ են տարվում նորարարական տեխնոլոգիաների ներդրման, էլեկտրոնային պաշարների և բաց կրթական պլատֆորմի ստեղծման ուղղությամբ:

35. Մեկ համակարգչին բաժին ընկնող աշակերտների թիվը 2010թ. կազմել է 30,2՝ 2004թ. 148,0-ի համեմատ:

36. Չնայած վերջին տարիներին այս բնագավառում իրականացված մեծածավալ աշխատանքներին, կրթական և տեղեկատվական-հաղորդակցման նոր տեխնոլոգիաներով համակարգի հագեցվածությունը բավարար մակարդակի չէ և Հայաստանը իր ցուցանիշներով հետ է մնում տարածաշրջանային երկրներից: բավարար չափով զարգացած չեն սովորողների և դասավանդողների ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի օգտագործման կարողություններն ու հմտությունները, հարուստ չեն առկա ուսումնական էլեկտրոնային միջոցները:

37. Այս խնդիրն առավել կարևորվում է նորաստեղծ ավագ դպրոցի՝ իբրև գրավիչ և նախընտրելի դպրոցի կայացման համար: Անհրաժեշտ է բարելավել ավագ դպրոցների նյութատեխնիկական հնարավորությունները, ստեղծել ժամանակակից գրադարաններ (ռեսուրսային կենտրոններ) ու լաբորատորիաներ, համալրել անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով և գրադարանային ֆոնդով:

38.Միաժամանակ, անհրաժեշտ է բարելավել դպրոցների շենքային պայմաններն ու հարստացնել նյութատեխնիկական բազան՝ մոտեցնելով այն միջազգային չափանիշներին: Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական դպրոցների զգալի մասը կառուցվել է մինչև 1970-ականները և չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, չունի բնականոն ուսումնակենցաղային պայմաններ: Հանրակրթական դպրոցներից 956-ը (66,4 %) ենթակա են հիմնանորոգման, 234-ը վերականգնման-ուժեղացման աշխատանքների կարիք ունեն, 167 (11,6 %) դպրոց գտնվում է վթարային վիճակում, իսկ 67-ը (4,6 %)՝ անավարտ են կամ նոր մասնաշենքերի կառուցման կարիք ունեն: 209 դպրոց չունի սպորտային, իսկ 254-ը՝ հանդիսությունների դահլիճներ: Որոշ դպրոցներում բացակայում են կամ չեն գործում ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերը:

39.Մասնագիտական կրթության կարևորագույն խնդիրներից է բուհերում և ՄՄՈՒՀ-ներում ժամանակակից, միջազգային պահանջներին համապատասխան կահավորված գրադարանների՝ այդ թվում՝ էլեկտրոնային, բացակայությունը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարանային ֆոնդերը հնացած են և չեն համապատասխանում ժամանակակից գրադարաններին ներկայացվող պահանջներին: Գրադարաններից օգտվելու մեխանիզմը դյուրացնելու և առավել արդյունավետ դարձնելու համար կարևոր է էլեկտրոնային գրադարանների ներդրումը: Խնդիրներ կան նաև ուսումնական գրականության ստեղծման, թարգմանության և տեղայնացման ապահովման, ուսումնական հաստատությունները ժամանակակից տեխնիկական սարքավորումներով, լաբորատորիաներով ու ուսումնամեթոդական պարագաներով համալրման աշխատանքներում:

40.Մանկավարժական մասնագիտություններով բուհերի և ՄՄՈՒՀ-ների մասնագիտական ծրագրերն ու ուսումնական պլանները չեն վերանայվել և համապատասխանեցվել հանրակրթության ոլորտում ընթացող բովանդակային բարեփոխումներին համապատասխան, մասնավորապես ուսուցման նոր մեթոդների, ուսումնական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից:

Գծապատկեր 4. Պետական բուհերում ուսանողների ընդգրկվածությունը՝ ըստ մասնագիտական խմբերի, %



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2010թ. հունվար-մարտ:

41. Այսօր մասնագիտական կրթության ոլորտում պետական աջակցությունը չի տեղաբաշխվում այնպես, որ ապահովի առավելագույն ներգրավվածություն: Հաշվի չեն առնվում տարբեր մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստման առանձնահատկություններն ու ծախսերի հաշվարկը՝ համապատասխանեցնելով դրանք տեղական և միջազգային աշխատաշուկայի պահանջներին: Մշակելով և ներդնելով մասնագիտական կրթության ոլորտի ֆինանսական հատկացումների նոր մեխանիզմներ, հնարավոր կլինի նաև վերանայել մասնագիտությունների չափաքանակների սահմանման և բաշխման մեխանիզմները, կենտրոնացնելով նաև մասնագիտական խմբերը:

Գծապատկեր 5. Գործազրկության մակարդակը և կադրերի պատրաստումը՝ ըստ մասնագիտությունների, %



42. Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում պրոֆեսորադասախոսական անձնակազմի 75.2%-ը հիմնական հաստիքային դասավանդողներ են. որոնցից 47.3%-ն ունի գիտական աստիճան, իսկ 39.3%-ը՝ գիտական կոչում: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմել է 10.95 (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրների միջինը 2007 թվականին կազմել է 16.1):

43. Միջին մասնագիտական կրթության համակարգում պրոֆեսորադասախոսական անձնակազմի 81.0%-ն է հիմնական հաստիքային դասավանդող, որից 86.9%-ն ունի բարձրագույն կրթություն: Դասախոսական կազմի միայն 0.9%-ն ունի գիտական աստիճան, իսկ 0.2%-ը՝ գիտական կոչում: Կրթության այս համակարգում ուսանող/դասախոս հարաբերակցությունը կազմել է 9.24 (ՏՀԶԿ երկրների միջինը 2007 թվականին կազմել է 15.1):

44. Պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացում առանձնահատուկ է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, որն ազգային արժեքների կրողն է:

45. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հիմնահարցերին ուղղված քաղաքականությունը շարունակում է մնալ գերակա ուղղություն: Կարևորագույն խնդիրներից է առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև սոցիալական ծանր վիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության և հասարակությունում նրանց ինտեգրման ապահովումը: Վերջին տարիներին աշխատանքներ են տարվում այդ երեխաների ուսուցումը հանրակրթական

դպրոցում կազմակերպելու, նրանց հասարակության մեջ լիարժեք ինտեգրելու ուղղությամբ: Դա բխում է նաև աշխարհում ընթացող կրթության և հասարակության հումանիզացման ընդհանուր միտումներից: Այս գործընթացում իր կարևոր դերն ունի արտադպրոցական դաստիարակության համակարգը:

46.Ներկայիս պետական քաղաքականության նպատակներից են համայնքային, մարզային և հանրապետական մակարդակներում որոշումներ կայացնելու գործընթացին երիտասարդների մասնակցության խթանումը, երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, հոգեպես և ֆիզիկապես առողջ, կրթված և հայրենասեր երիտասարդություն ունենալը: Ուսումնական հաստատությունների ներգրավումը և մասնակցությունը համայնքային գործողությանը կնպաստի այդ պայմանների ստեղծմանը՝ զարգացնելով ակտիվ համագործակցությունը հաստատությունների և համայնքների միջև: Այս պայմաններում գլխավոր նպատակը սովորողներին ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիքներ հաղորդելն ու ուսուցանելն է, այլև արագ որոշումներ կայացնելու, ակտիվ հաղորդակցվելու և ողջ կյանքի ընթացքում սովորելու ունակ քաղաքացի ձևավորելը:

47.Համայնքային գործողությունն ուղղված է ուսումնական հաստատության և հատուկ դպրոցների միջև փոխադարձ կապեր ստեղծելուն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալական դժվարություններում գտնվող երեխաներին հասարակության մեջ ներառելու գործընթացին նպաստելուն, ինչպես նաև համայնքի զարգացմանն ուղղված աշխատանքներում սոցիալապես խոցելի ընտանիքներին ներգրավելու:

2.3. Կրթության ֆինանսավորումը և արդյունավետությունը

48.Վերջին տարիներին կրթության ոլորտին պետական բյուջեով հատկացվող ծախսերը շարունակաբար աճել են. 2009 թվականին այն կազմել է ՀՆԱ-ի 3.38%-ը՝ 2008 թվականի 2.83%-ի դիմաց (տե՛ս աղյուսակ 3): Չնայած պետական բյուջեով կրթության ոլորտին նախատեսված հատկացումների զգալի աճին, այնուամենայնիվ Հայաստանում ՀՆԱ-ի նկատմամբ կրթական ծախսերի մասնաբաժնի ցուցանիշը ՏՀԶԿ, ինչպես նաև ԿԱԵ ու ԱՊՀ երկրների համեմատ (ՏՀԶԿ երկրների միջինը 2006 թվականին կազմել է 4.8%, ԿԱԵ և (ԱՊՀ) երկրների միջինը 2007 թվականին՝ 4.4%) դեռևս մնում է բավական ցածր: Առաջիկա տարիներին նույնպես կանխատեսվում է բյուջետային հատկացումների աճ, թեև ՀՆԱ-ի նկատմամբ սպասվում է որոշակի անկում:

Աղյուսակ 3. Հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի 2006-2009 թվականների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում:

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
Ընդամենը կրթություն	2.51	2.84	2.83	3.38
այդ թվում՝				
Հանրակրթական ծրագրեր	2.11	2.47	2.38	2.86
Մասնագիտական կրթական ծրագրեր	0.30	0.29	0.37	0.41

Աղբյուրը՝ 2011-2013թթ միջնաժամկետ ծախսային ծրագիր (ՄԺԾԾ 2011-2013):

49.Կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների գերակշիռ մասը՝ մոտ 84.7%-ը, 2009 թվականին ուղղվել է հանրակրթության ոլորտին, իսկ 12.2%-ը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը: Առաջիկա տարիներին այս համամասնության մեջ էական փոփոխություններ չեն սպասվում:

Գծապատկեր 6. Կրթության ոլորտի պետական ծախսերը 2009-2013 թվականներին՝ ըստ ուղղությունների,%



Աղբյուրը՝ ՄԺԾԾ 2011-2013թթ.:

50.2006 թվականից կրթության ոլորտում ներդրվել է ծրագրային բյուջետավորումը: Կրթության ոլորտի ծրագրերը խմբավորված են 6 խմբերում, դրանցից 5-ը տարբեր մակարդակների կրթական ծառայությունների մատուցման ծրագրեր են: 6-րդ՝ «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծախսեր» խմբում, ընդգրկված են տարաբնույթ ծրագրեր, որոնք պայմանականորեն կարող են դասակարգվել հետևյալ կերպ՝ 1) սովորողներին, մանկավարժներին և ուսումնական հաստատություններին ուղղված օժանդակության ծրագրեր, 2) հանրապետական միջոցառումներ, 3) սփյուռքի օժանդակության ծրագրեր, 4) հիմնանորոգման ծրագրեր, 5) զարգացման ծրագրեր: Վերջինները կազմում են տվյալ խմբի ծախսերի

մոտ 25%-ը կամ կրթության ընդհանուր բյուջեի 3%-ը, որի մեծ մասը Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի միջոցներն են: Միաժամանակ, հարկ է նշել, որ զարգացման քաղաքականությունները միշտ չէ, որ բյուջեում արտացոլված են առանձին ծրագրերով, և համակարգի զարգացմանն ուղղված միջոցներն իրականում ավելի մեծ են:

51. **Կրթության համակարգի զարգացման կարևոր նախապայման է համակարգի արդյունավետության բարձրացումը:** Չնայած ռեսուրսների սահմանափակությանը, Հայաստանի կրթական համակարգի արդյունավետության որոշ ցուցանիշներ համադրելի են զարգացած որոշ երկրների համապատասխան ցուցանիշներին: Ոլորտի բարեփոխումների շնորհիվ հանրակրթական դպրոցներում «աշակերտ/ուսուցչական դրույք» և «աշակերտ/ոչ ուսուցչական դրույք» հարաբերակցությունների մակարդակը 2008-2009 թվականներին հասցվել է համապատասխանաբար 14.5-ի և 24.1-ի՝ 2007 թվականի 14.0 և 23.2-ի դիմաց: «Աշակերտ/ ուսուցչական դրույք» ցուցանիշը հիմնականում պայմանավորված է դասարանի միջին խտությամբ, քանի որ ուսուցչի ծանրաբեռնվածությունը և դասաժամերի քանակը կայուն ցուցանիշներ են: 2008 թվականին պետական հանրակրթական դրոցներում դասարանի միջին խտության ցուցանիշը կազմել է 20.95 (Ըստ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների՝ դասարանի միջին խտությունը պետական հանրակրթական հաստատություններում կազմել է 18 աշակերտ), որը ցածր է անգամ ՏՀԶԿ երկրների 2007թ. ցուցանիշից (21.4՝ տարրական դպրոցում, 23.9՝ միջին դպրոցում):

52. Հարկ է նշել, որ այս ցուցանիշները, հաշվարկված լրիվ միջնակարգ դպրոցի կտրվածքով, լիարժեք չեն արտացոլում իրական պատկերը, քանի որ և՛ դասարանի նորմատիվ խտությունը, և՛ ուսումնական պլանով սահմանված պարտադիր ժամաքանակները հանրակրթության տարբեր աստիճաններում տարբեր են: Հաշվի առնելով, որ միջազգային հրապարակումներում այս ցուցանիշները սովորաբար ներկայացվում են առանձնացված՝ տարրական և միջին դպրոցների համար, Հայաստանում նույնպես դրանք տարանջատելու անհրաժեշտություն կա:

53. Ըստ կրթության համակարգի արդյունավետության ցուցանիշների՝ էական տարբերություններ կան մարզերի միջև (տե՛ս աղյուսակ 4): Առավել խոցելի են Սյունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերը, ինչը պայմանավորված է այդ մարզերում փոքրակազմ դպրոցների մեծ թվով: Այս հանգամանքը հանգեցնում է նշված մարզերում մեկ աշակերտի համար կատարվող ծախսի զգալի մեծացմանը՝ մյուս մարզերի համեմատ (տե՛ս գծապատկեր 7): Տարածքների համաչափ

զարգացման նպատակով անհրաժեշտ է մշակել համահարթեցման հասցեական քաղաքականություններ:

54. Այսպիսով, կրթության համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր հիմնախնդիրներից և նախապայմաններից է ցուցանիշների արդյունավետ համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա մշակել փաստերի վրա հիմնված քաղաքականություններ:

Աղյուսակ 4. Հանրակրթական դպրոցների տեսակարար ցուցանիշները՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2009/2010 ուստարի

	Միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են, մարդ	Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են, մարդ	Դասարանների քանակը մեկ դպրոցում, միավոր	Մեկ ուսուցչին ընկնող աշակերտների թվաքանակը, մարդ	Մեկ դպրոցին ընկնող ուսուցիչների թվաքանակը, մարդ
ք.Երևան	458.6	21.3	21.5	11.3	40.5
Արագածոտն	156.5	7.9	19.9	6.7	23.4
Արարատ	314.6	19.4	16.2	10.8	29.1
Արմավիր	305.1	22.2	13.7	9.9	30.8
Գեղարքունիք	266.7	23.8	11.2	9.1	29.3
Լոռի	201.8	14.7	13.8	8.4	24.1
Կոտայք	324.4	16.3	19.9	10.3	31.6
Շիրակ	204.1	11.2	18.3	8.7	23.5
Սյունիք	139.6	16.6	8.4	7.0	20.1
Վայոց Ձոր	145.7	16.3	9.0	7.1	20.4
Տավուշ	208.8	22.0	9.5	8.2	25.6
Ընդամենը ՀՀ	**269.7**	**17.1**	**15.8**	**9.5**	**28.5**

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը , 2009թ.:

55. Մասնագիտական կրթության ոլորտի կարևոր խնդիրներից է ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման ինքնավարության ընդլայնման ապահովումը:

56. Վերջին տարիներին զգալիորեն աճել են կրթության պետական ծախսերը՝ 2009 թվականին հասնելով ՀՆԱ-ի 3.4%-ի՝ 2002 թվականի 2.0%-ի դիմաց: Սակայն սա դեռևս ցածր ցուցանիշ է՝ համեմատած ՏՀԶԿ երկրների միջինի հետ և անգամ միջին եկամուտ ունեցող երկրների նույն ցուցանիշի հետ: Պետական ծախսերի ցածր մակարդակը մասամբ փոխհատուցվում է կրթության ոլորտում մասնավոր ծախսերի համեմատաբար բարձր մակարդակով (ՀՆԱ-ի շուրջ 1.9%), ինչը նպաստում է կրթության ընդհանուր ծախսերի աճին՝ հասցնելով դրանք մինչև ՀՆԱ-ի 4.8%-ի՝ ՏՀԶԿ միջին 5.7%–ի համեմատ (5.0% պետական և 0.7% մասնավոր): Այս համեմատաբար փոքր ընդհանուր ծախսերը սահմանափակում են պետության հնարավորությունը՝ բարձրացնելու կրթության որակը և մատչելիությունը բոլոր մակարդակներում: Կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների շուրջ

7%-ը ուղղվել է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը (ՏՀՁԿ երկրներում 20%-ի դիմաց):

Գծապատկեր 7 .Աշակերտների թիվը և մեկ աշակերտի ֆինանսավորման ցուցանիշները՝ ըստ մարզերի



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը, 2010թ., Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառի 2009թ. բյուջե:

57.Մասնագիտական ծրագրերում նախատեսված պետական ծախսերի մոտ 71.6%-ը ուղղված է բարձրագույն կրթությանը, իսկ 28.4%-ը՝ միջին մասնագիտականին:

58.Պետական բյուջեից բուհերին հատկացվող ֆինանսավորումը կազմում է վերջիններիս եկամտի 21%-ը: Պետական բուհերում ուսանողական վարձավճարները բավականին բարձր են՝ հասնելով մեկ շնչին ընկնող եկամտի մոտ 20%-ին: Վճարների հատուցման հիմնական ծանրաբեռնվածությունը բաժին է ընկնում ուսանողների ծնողներին, ինչն ուսումնառության ընթացքում լրացուցիչ ֆինանսական դժվարություններ է ստեղծում ուսանողների և նրանց ընտանիքների համար, որն էլ, իր հերթին, խնդիրներ է առաջացնում բարձրագույն կրթության մատչելիության և հավասարության տեսանկյունից:

59.Միջին մասնագիտական կրթության համակարգում պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացող ուսանողների թիվը 2006 թվականի դրությամբ եղել է 25.3%, մինչդեռ 1998 թվականին այն եղել է 40.1%: Պետական բյուջեից ոլորտին պետական ֆինանսավորման ամենացածր մակարդակը 2003 թվականին եղել է 19.9%: 2009-2010 ուստարում ՄՄՈՒՀ-ներում նպաստառու

սովորողների թիվը եղել է 29.1%: Միջին մասնագիտական կրթության համակարգում տարեցտարի պետական ֆինանսավորման ավելացման միտում կա, որը պայմանավորված է ոլորտում ներկայումս ընթացող բարեփոխումներով, որոնք ուղղված են աղքատության կրճատմանը (տե՛ս գծապատկեր 8): Վճարովի համակարգում սովորող ուսանողների թիվը գրեթե չի փոփոխվել:

Գծապատկեր 8. Պետական ՄՄՈՒՀ-ներում պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացող սովորողների թիվը, % սովորողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ:



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 1999-2009թթ.

60. Մասնագիտական ծրագրերում նախատեսված պետական ծախսերի մոտ 39.6%-ն ուղղված է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությանը, իսկ 60.4%-ը՝ բարձրագույն կրթությանը:

61. Հանրապետությունում գործում են 23 բարձրագույն պետական ուսումնական հաստատություն և 12 մասնաճյուղ: Պետական համակարգում սովորում է մոտ 92 հազար ուսանող, որոնց մոտ 21%-ն է ֆինանսավորվում պետության կողմից՝ ընդունելության քննությունների արդյունքների և ուսման ընթացքում առավել բարձր առաջադիմության հիման վրա ընդգրկվելով ուսանողական նպաստների համակարգում, իսկ ուսանողների հիմնական մասը սովորում է վճարովի հիմունքներով: Անվճար ուսուցման համակարգում սովորող ուսանողների 97.6%-ը ստանում է կրթաթոշակ: Միջին մասնագիտական կրթության համակարգում գործել է 81 պետական ուսումնական հաստատություն: Ուսանողների քանակը կազմել է 28 368 (տե՛ս գծապատկեր 9):

Գծապատկեր 9. Բարձրագույն և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակը՝ 10 000 բնակչի հաշվով:



Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009թ.:

62.2009 թվականին բուհի անվճար ուսուցմամբ սովորող մեկ ուսանողի հաշվով պետական ծախսերը 2.12 անգամ գերազանցել են մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը: Սակայն այն բացասաբար չի ազդել բուհում համախառն ընդգրկվածության ցուցանիշի վրա (2009թ. բուհական համակարգում ընդգրկված է եղել 114,6 հազար ուսանող՝ 2006թ. 105,8-ի դիմաց):

63.Բուհի մեկ ուսանողի հաշվով պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցման ծախսը առանց կրթաթոշակի միջինում կազմում է 256.600 դրամ: ՄՄՈՒՀ-ում այդ ցուցանիշը կազմում է 258.300 դրամ: Մեկ ուսանողի հաշվով տարեկան միջին ծախսը կազմում է մոտավորապես 700 ԱՄՆ դոլար, մինչդեռ ՏՀԶԿ երկրներում այն համապատասխանաբար կազմել է 8415 և 7617 ԱՄՆ դոլար:

64.Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները պետությունից ստանում են նաև ուսանողական կրթաթոշակ (ամսական մոտ 5000 դրամի չափով), որն առանձին ուսանողի համար էական դեր չի խաղում ուսման մատչելիության կամ կենսամակարդակի բարելավման առումով, սակայն հանրագումարային առումով ուսանողական կրթաթոշակի գումարը զգալի մաս է կազմում մասնագիտական կրթական ծրագրերին ուղղված բարձրագույն կրթության պետական ծախսերում:

2.4. Կրթության կառավարումը

65.Հանրային կառավարման և, մասնավորապես, կրթության կառավարման բնագավառում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց շնորհիվ մեծացել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծվել կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար, կառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ: Սակայն արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ կան, որոնք պետք է լուծվեն:

66. Կրթության կառավարման մասնագետների նպատակային պատրաստում չի իրականացվում, իսկ կարողությունների զարգացման առանձին ծրագրերն էականորեն չեն բարելավել իրավիճակը: Կարողությունների պակաս է զգացվում հատկապես ծրագրերի կառավարման, ռազմավարական պլանավորման, մոնիթորինգի և գնահատման, դոնորների հետ աշխատանքների բնագավառներում: 2006 թվականից կրթության բնագավառում ներդրվել է ծրագրային բյուջետավորումը, սակայն նախարարության բուն գործունեության մեջ ծրագրերի կառավարումը դեռևս փոքր մաս է կազմում. բովանդակային վարչությունները շատ դեպքերում չեն համակարգում իրենց ոլորտում իրականացվող ծրագրերը, չկա հստակ հաշվետվողականության համակարգ, իսկ ծրագրերում հիմնականում սահմանված չեն արդյունքային ցուցանիշներ:

67.Հուսալի, բովանդակ և ամբողջական տվյալների ստացման մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է փաստերի հիման վրա որոշումների կայացման գործընթացը: Նախարարության համակարգում գործող կառավարման տեղեկատվական համակարգը ներկայումս ընդգրկում է միայն հանրակրթության ոլորտը, իսկ դրա միջոցով ստացվող տվյալները շատ դեպքերում ամբողջական չեն և երբեմն հակասում են այլ աղբյուրներից ստացված տվյալներին: Այժմ միջոցներ են ձեռնարկվում ընդլայնելու կրթության կառավարման տեղեկատվական համակարգը՝ ներառելով կրթության բոլոր մակարդակները, ամբողջացնելու տեղեկատվական պաշարները՝ ընդհուպ անհատականացված տվյալներ, բարձրացնելու տեղեկատվական պաշարների մատչելիությունը շահառուների տարբեր խմբերի համար:

68. Կրթության բնագավառում կարևոր խնդիր է տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի համակարգումն ու համադասումը:

69. Զգալի առաջընթաց է գրանցվել կրթության կառավարման մասնակցային մեխանիզմների ընդլայնման ուղղությամբ. գործում է նախարարության կոլեգիան, որի կազմում ներգրավված են նաև հասարակական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, ձևավորվել է մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդը, որում ընդգրկված են հարակից նախարարությունների և գործատուների կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բոլոր ուսումնական հաստատությունները վերակազմակերպվել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ղեկավարվում են կառավարման ներկայացուցչական խորհուրդներով:

2.5. Ամփոփում

70. Այսպիսով՝ կրթության ոլորտի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներն են՝

1) փոքր է նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը, շատ համայնքներում չկան նախադպրոցական կրթական ծառայություններ,
2) թերի է դպրոցից դուրս մնացած երեխաների հաշվառման և նրանց կրթության մեջ ընդգրկելու համակարգը,
3) հանրակրթական դպրոցները սահմանափակ կարողություններ ունեն ապահովելու բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը,
4) մասնագիտական, հատկապես բարձրագույն կրթությունը մատչելի չէ սոցիալապես խոցելի որոշ խմբերի համար,
5) ձևավորված չեն մասնագիտական կրթության որակի ներքին և արտաքին գնահատման համակարգերն ու մեխանիզմները,
6) դասավանդող անձնակազմը բավարար չի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին, ցածր է մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման արդյունավետությունը, չկա մանկավարժների մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգ,
7) կրթական ծրագրերում գերակշռում է սովորողների տեսական պատրաստվածությունը, շրջանավարտները չունեն կյանքի և մասնագիտական գործունեության համար բավարար կիրառական

կարողություններ ու հմտություններ, արդյունավետ մասնագիտական կողմնորոշում,

8) թույլ է կրթության տարբեր մակարդակների, ինչպես նաև կրթության և տնտեսության միջև երկխոսությունը, բավարար չեն սոցիալական գործընկերության մեխանիզմները,

9) դեռևս ապահովված չէ կրթական ծրագրերի ամբողջական համադրելիությունը միջազգային չափանիշներին, կրթության համակարգը չի կարողանում արագ և արդյունավետ արձագանքել հասարակության և տնտեսության արագընթաց զարգացումներին,

10) դասագրքերի որակը բովանդակային առումով բարելավման կարիք ունի,

11) անբավարար է ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում, կա էլեկտրոնային ուսումնական նյութերի պակաս,

12) շատ ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազան չի համապատասխանում ժամանակակից պահանջներին,

13) բարելավման կարիք ունեն կրթության ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմները,

14) կրթության կառավարման բոլոր մակարդակներում կա կառավարչական կարողությունների, կառավարման արդյունավետ մեխանիզմների զարգացման անհրաժեշտություն:

3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

71. Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով:

72. Հայաստանի կրթության զարգացման հեռանկարն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում՝ ապահովելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների իրականացումը.

1) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,
2) աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում,
3) կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում,
4) հայապահպանություն,
5) միջազգային և տարածաշրջանային համագործակցություն:

73. **Անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում:** Հայաստանի Հանրապետությունն անցնում է պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման դժվարին ճանապարհ: Այս գործընթացում հսկայական է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, որը կրողը կլինի ազգային արժեքների՝ համադրված քաղաքացիական հասարակության առաջադիմական մշակույթի հետ:

74. **Աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում:** Պետականության կայացման ճանապարհին Հայաստանը ստիպված է լուծել մի շարք սոցիալական խնդիրներ՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների կայուն բարեկեցությունը: Առավել առաջնային է աղքատության հաղթահարումը, որում կրթությունը դիտարկվում է հիմնական գերակայությունների շարքում: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսական զարգացման միտումները՝ այս բնագավառում ևս առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնումը սոցիալական անհավասարությունն ու տարածքային անհամաչափ զարգացումը մեղմելու հրամայականով:

75. **Կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում:** Հայաստանի մրցունակության ապահովման տեսանկյունից կրթության համակարգը երկու հիմնական մարտահրավերի առաջ է կանգնած: Կրթության համակարգը դեռևս էական դերակատարում չունի հանրապետության տնտեսական խնդիրներում, մինչդեռ առանց կրթության համակարգի արմատական բարեփոխման անհնար կլինի ապահովել զարգացման շարունակականությունը, գիտելիքահենք տնտեսության և հասարակության ձևավորումը: Բարձրորակ մարդկային կապիտալի առկայությունը հանդիսանում է ժամանակակից տնտեսական զարգացման հիմնական նախապայմանը և առանց դրա անհնար է երկարաժամկետ հեռանկարում ապահովել կայուն տնտեսական զարգացում: Կրթության համակարգը պետք է լինի բարձր մտավոր և ստեղծագործական ունակություններով օժտված, միջազգային մակարդակում մրցունակ գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստման պատասխանատուն և երաշխավորը: Կայուն տնտեսական աճը երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև երկրի արդիականացման աստիճանը և ինստիտուցիոնալ կարողությունների աճը մեծապես պայմանավորված են կրթության ոլորտի բարեփոխումների հաջող իրականացմամբ:

76. Մյուս կողմից, կրթությունն ինքնին կարող է լինել Հայաստանի մրցակցային առավելություններից մեկը: Գտնվելով մշակույթների և քաղաքակրթությունների խաչմերուկում, Հայաստանն ու հայությունը պատմականորեն ձեռք են բերել կարևորագույն հատկանիշներ և գործառույթներ, որոնք այսօր ոչ միայն չեն կորցրել իրենց արդիականությունը, այլև կարող են դառնալ մեր պետության ու հասարակության զարգացման կարևորագույն ազդակը՝ ապահովելով մեր ուրույն տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում:

77. Ընդունելով կրթական եվրոպական չափանիշներ և ապահովելով բարձրորակ կրթություն՝ Հայաստանի կրթական համակարգը կարող է բավականին գրավիչ դառնալ հարևան երկրների համար ինչպես կրթական ծառայություններ ստանալու, այնպես էլ կրթության ոլորտում ներդրումներ անելու առումով: Նման դերակատարում ունենալու ձգտում ունեն նաև տարածաշրջանի՝ մեզ հարևան որոշ երկրներ, որոնք նույնպես հռչակել են եվրաինտեգրման քաղաքականություն և ակտիվորեն քայլեր են ձեռնարկում իրենց կրթական համակարգերը զարգացնելու եվրոպական չափանիշներին համապատասխան: Այս խնդրում ունենալով որոշակի մրցակցային առավելություններ՝ Հայաստանը պետք է որդեգրի առավել արագընթաց բարեփոխումների քաղաքականություն՝ հատկապես մասնագիտական կրթության ոլորտում:

78.**Միջազգային և տարածաշրջանային համագործակցություն:** Գտնվելով մի տարածաշրջանում, որտեղ խաչվում են տարբեր աշխարհաքաղաքական ուժերի շահեր, Հայաստանը որդեգրել է միջազգային ակտիվ ներգրավվածության ռազմավարություն: Սա մի կողմից՝ ենթադրում է կրթության բնագավառի ակտիվ մասնակցություն գլոբալ և տարածաշրջանային գիտակրթական գործընթացներին, մյուս կողմից՝ խնդիր է առաջադրում կրթությանը՝ մեծացնել նման մասնակցության ներուժը, ապահովել լեզվական և միջմշակութային շփումների դժվարությունների հաղթահարումը:

79.**Հայապահպանություն:** Հայաստանի կարևոր հիմնախնդիրներից է հայապահպանությունը: Ունենալով աշխարհասփյուռ հայություն՝ Հայաստանը ջանում է ներգրավել Սփյուռքի ներուժը՝ միաժամանակ ստանձնելով պարտականություն՝ աջակցելու նրան՝ դիմակայելու ուծացմանը և լեզվամշակութային ինքնության կորստին: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը կոչված է համակողմանիորեն սատարելու սփյուռքահայ կրթօջախների գործունեությանը, ապահովելու արդյունավետ համագործակցություն գիտակրթական ոլորտում՝ դրանով իսկ պայմաններ ձևավորելով համահայկական ներուժի համախմբման և ռացիոնալ օգտագործման նպատակային խնդիրների լուծման համար:

4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

80. Կրթության զարգացումը պետք է առաջնորդվի **կրթության՝ որպես Հայաստանի մրցակցային հիմնական առավելության,** տեսլականով: Այս տեսանկյունից կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության և գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:

81. Մինչև 2015 թվականը Հայաստանի զարգացման համար ուղենշային պետք է լինեն «Հազարամյակի հռչակագրի» և «Կրթություն բոլորի համար» գլոբալ շարժման սահմանած նպատակադրումները, ինչպես նաև Բոլոնիայի հռչակագրի, Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ընդունած «Կրթությունը հանուն կայուն զարգացման» ռազմավարության և «Հյոգոյի 2005-2015թթ. գործողությունների ծրագրի» սկզբունքները: Միաժամանակ, կրթական համակարգի զարգացումները պետք է ուղղված լինեն գլոբալ մրցունակության համաթվի կրթության հատվածի ցուցանիշների բարելավմանը՝ նպաստելով Հայաստանի ընդհանուր մրցունակության բարձրացմանը:

82. Կրթության զարգացման ռազմավարական նպատակին հասնելու համար սահմանվում են կրթության՝ մինչև 2015 թվականը զարգացման հետևյալ նպատակները.

1) բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրը ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան: Մասնավորապես, մինչև 2015 թվականը՝
   - ա. նախադպրոցական ծրագրերում երեխաների (հատկապես աղքատ ընտանիքների), ընդգրկվածությունը 2010 թվականի համեմատ բարձրացնել 10%-ով՝ ապահովելով դպրոցին նախորդող տարում երեխաների առավելագույն ընդգրկվածություն,
   - բ. տարրական և միջին դպրոցում համախառն ընդգրկվածությունը հասցնել 99%,
   - գ. ընդլայնել դպրոցահասակ երեխաների, ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնությունների և խոցելի մյուս բոլոր խմբերի երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝

ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում,

դ. ավագ դպրոցում, ներառյալ՝ նախնական մասնագիտական ծրագրերը, համախառն ընդգրկվածությունը հասցնել 95%,

ե. 10%-ով մեծացնել ընդգրկվածությունը մասնագիտական կրթական ծրագրերում, հատկապես՝ ի հաշիվ խոցելի խմբերի երիտասարդների.

2) բարելավել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին, ապահովելով հասարակության և գործարար միջավայրի բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայություններից: Մասնավորապես, մինչև 2015 թվականը՝

ա. ԹԻՄՍՍ միջազգային գնահատումներում ապահովել 8% առաջընթաց 2011 թվականի համեմատ,

բ. հիմնական և միջնակարգ դպրոցը դրական գնահատականներով ավարտողների թիվը հասցնել 99%,

գ. ատեստավորել հանրակրթական դպրոցների ուսուցիչների 95%-ը,

դ. բարելավել հանրակրթական դպրոցների ուսումնանյութական բազան, բոլոր դպրոցները ապահովել ինտերնետ կապով,

ե. ապահովել 20% ուսանողների և դասախոսների շարժունություն,

զ. ապահովել ազգային որակավորումների համադրելիությունը «Որակավորումների եվրոպական շրջանակին» (EQF),

է. որակի ներքին և արտաքին ապահովման սահմանած չափանիշներին համապատասխան գնահատել և հավատարմագրել 10 բարձրագույն և 10 ՄՄՈՒՀ,

3) ապահովել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ: Մասնավորապես, մինչև 2015 թվականը՝

ա. պետական բյուջեից կրթությանը տրվող միջոցների մակարդակը հասցնել մինչև ՀՆԱ-ի 4%,

բ. ներդնել կրթության արդյունքային ցուցանիշների վրա հիմնված ֆինանսավորման և արդյունավետության գնահատման գործիքներ:

5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

83.Ծրագրի գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է որդեգրել այնպիսի ռազմավարական մոտեցումներ, որոնք կապահովեն բարեփոխումների առավել նպատակասլացություն և արդյունավետություն: Նախ՝ հաշվի առնելով միջոցների սահմանափակությունը՝ անհրաժեշտ է նախապատվություն տալ այնպիսի ռազմավարությունների, որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք Երկրորդ՝ առաջնայնությունը տալ այն արդյունքներին, որոնք, լինելով էական, նաև հասանելի են համեմատաբար կարճ ժամանակահատվածում: Երրորդ՝ ստեղծել զարգացումների համար բարենպաստ միջավայր՝ սահմանելով անհրաժեշտ կանոններ, զարգացման ուղենիշներ, որոնք նաև կխթանեն առանձին կազմակերպությունների ու անհատների նախաձեռնությունները և նվաճումների հասնելու ներուժի դրսևորումը:

84. Նման դիրքորոշմամբ է պայմանավորված ստորև բերված հիմնական ռազմավարական մոտեցումների ընտրությունը.

1) ձևավորել նախաձեռնությունը և նորարարությունը խրախուսող միջավայր,

2) կիրառել գործունեության արդյունքային ցուցանիշներից կախված ռեսուրսների բաշխման տարբերակված մոտեցում,

3) հայտնաբերել, ձևավորել, զարգացնել գերազանցության օջախները, կապակցել դրանք՝ ստեղծելով կրթական ցանցեր,

4) խթանել համագործակցությունն ու մասնակցությունը կրթության բոլոր ոլորտներում:

85.**Նախաձեռնությունը և նորարարությունը խրախուսող միջավայր:** Ծրագրի նպատակների իրականացումը մեծապես պայմանավորված է համակարգի բոլոր օղակների և մասնակիցների ակտիվ մասնակցությամբ և նրանց ունեցած ներդրումով: Դրա համար նախ անհրաժեշտ է ստեղծել ակտիվության դրսևորման բարենպաստ միջավայր, խրախուսել և օժանդակել ստեղծագործ անհատների, նրանց խմբերի ու կազմակերպությունների պատրաստակամությունն ու ձգտումը մասնակից լինելու և ներդրում ունենալու կրթության բարեփոխումների ու առաջընթացի մեջ: Հստակ սահմանված արդյունավետ կանոնները, և դրանց հետևողական կիրառումը կարող են հանգեցնել արդյունավետ նախաձեռնությունների, որոնց հավաքական արդյունքը կդառնա առաջընթացի կարևոր գործոններից մեկը:

86. Նման մոտեցումը կրթության կառավարման մարմիններից պահանջում է սահմանել զարգացման կոնկրետ ուղենիշեր և գերակայություններ, ստեղծել վստահության մթնոլորտ և առողջ մրցակցային դաշտ, դրսևորել համագործակցության պատրաստակամություն, որպեսզի յուրաքանչյուր նախաձեռնություն պատշաճ ուշադրության արժանանա:

87.Նման ռազմավարության պարագայում հնարավոր է ոչ միայն ընդլայնել Ծրագրի նպատակների իրականացման գործում կրթության համակարգի ներկայացուցիչների ընդգրկվածությունը, այլև ստանալ քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի օժանդակությունը:

88. **Ռեսուրսների տարբերակված բաշխում՝ ըստ գործունեության արդյունքների:** Պետությունը պարտավորություն ունի ապահովել որակյալ կրթության մատչելիությունը քաղաքացիների համար՝ ստեղծելով հավասար հնարավորություններ և բարելավելով ուսումնական հաստատությունների կարողությունները: Դրա կարևոր նախապայման է ռեսուրսների արդյունավետ և արդարացի բաշխումը: Կարևորելով հավասարության սկզբունքը՝ միջոցների բաշխման «կարիքներից կախված» սկզբունքին զուգահեռ, կընդունվեն այնպիսի մոտեցումներ, որոնք արդարացի, սակայն տարբերակված բաշխման միջոցով առավելագույն հնարավորություններ կընձեռեն լավ արդյունք ցուցաբերողներին:

89. Այս ռազմավարությունը նախատեսում է՝

1) ներդնել ուսումնական հաստատությունների, ներառյալ դրանց աշխատակիցների, գործունեության արդյունավետության և արդյունքային օբյեկտիվ ցուցանիշների համակարգ,

2) բարելավել ուսումնական հաստատությունների հաշվետվողականության համակարգը և գործունեության թափանցիկությունը,

3) ներդնել գնահատման օբյեկտիվ և մասնակցային մեխանիզմներ, որտեղ հաշվի կառնվեն շահառուների տարբեր խմբերի գնահատականները,

4) ներդնել ուսումնական հաստատությունների՝ դրանց գործունեության օբյեկտիվ ցուցանիշներով պայմանավորված ֆինանսավորման մեխանիզմներ,

5) բարձրացնել վերահսկման մեխանիզմների արդյունավետությունը:

90. **Հայտնաբերել, ձևավորել, զարգացնել և կապակցել «գերազանցության կենտրոններ»:** Բարեփոխումներն արագացնելու և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է կիրառել «գերազանցության կենտրոնների» միջոցով կրթական համակարգը զարգացնելու մոտեցումը: Այս մոտեցումը ենթադրում է բարեփոխումներն իրականացնել մի կողմից՝ օրինակելի կենտրոններ

հայտնաբերելու և զարգացնելու, մյուս կողմից՝ նմանատիպ կենտրոններ ստեղծելու միջոցով: Դրանք կստանձնեն բարեփոխումներն առաջնորդողի և տարածողի դերը: Կրթական համակարգի համաչափ զարգացում ապահովելու համար բոլոր մարզերում կկիրառվի «գերազանցության կենտրոններ» ձևավորելու քաղաքականություն: Որպեսզի կենտրոնների ազդեցությունն առավելագույնս դրսևորվի, անհրաժեշտ է ապահովել դրանց փոխկապակցումը ինչպես միմյանց, այնպես էլ արտերկրի կառույցների հետ: «Գերազանցության կենտրոնները» խրախուսվելու են և պարտավորություն են ստանձնելու աջակցել նոր կենտրոնների ձևավորմանը :

91. Նման ռազմավարությունը նախատեսում է՝

1) բացահայտել կրթական համակարգի՝ զարգացման առավել մեծ ներուժ ունեցող օղակները, աջակցել դրանց զարգացմանը և նորերի ստեղծմանը,

2) նպաստել, որ այդ օղակները ժամանակի ընթացքում վերածվեն լիարժեք կառույցների՝ «գերազանցության կենտրոնների »,

3) դրանց ներուժը մեծացնելու նպատակով օժանդակել կենտրոնների փոխկապակցմանը,

4) նպաստել, որ «գերազանցության կենտրոնները» դառնան տարածաշրջանային ռեսուրսային կենտրոններ և դրանց հիմնական առաքելությունը լինի հարակից կրթական հաստատությունների զարգացմանը օժանդակելը:

92. **Համագործակցություն և մասնակցություն:** Հասարակության զարգացման ներկա փուլի կարևոր միտումներից է «ցանցային» զարգացումը: Այն տարածվում է ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մակարդակներում: Միջազգային տնտեսական, հասարակական, մասնագիտական և այլ ցանցերում մասնակցությունն անհրաժեշտ է շարունակաբար նորացվող գիտելիքի համաշխարհային շտեմարանից օգտվելու, առկա գիտելիքն ու փորձն արագորեն տեղայնացնելու, իսկ տեղական գիտելիքն ու նորարարությունը միջազգայնացնելու համար: Տեղային ցանցերը հնարավորություն են ընձեռում ռեսուրսների համատեղման, փորձի արագ փոխանցման, տարբեր համակարգերի միջև արդյունավետ երկխոսության համար:

93. Կրթության բոլոր մակարդակներում կխրախուսվի համագործակցությունը ինչպես համակարգի ներսում, այնպես էլ համակարգից դուրս: Առաջնայնություն կտրվի այն ծրագրերին, որոնք կհանդիսանան համագործակցության արդյունք, կամ ուղղված կլինեն համագործակցության ամրապնդմանն ու ընդլայնմանը: Կորդեգրվեն այնպիսի մոտեցումներ, որոնք բարենպաստ պայմաններ կստեղծեն կրթական համակարգի՝ անհատների, խմբերի և հաստատությունների համար՝ ընդգրկվելու միջազգային ցանցերում, ինչը կնպաստի Հայաստանի կրթության վարկանիշի և

ընդհանուր մրցունակության բարձրացմանը, և կրթության որակի բարելավման լրացուցիչ խթան կհանդիսանա: Այս տեսանկյունից, կրթության զարգացման կարևոր խնդիրներից մեկը կլինի անհատների և հաստատությունների համագործակցության և մասնակցության ներուժի զարգացումը:

94.Միաժամանակ, կընդլայնվեն քաղաքացիական հասարակության, գործարար համայնքի, ինչպես նաև կրթության համակարգի յուրաքանչյուր ներկայացուցչի մասնակցության հնարավորությունները կրթության կառավարման և ծրագրերի իրականացման ոլորտներում: Այդ նպատակով կմշակվի և կիրականացվի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաղորդակցության ռազմավարությունը, որը միտված կլինի համակարգի գործունեության թափանցիկությանը, հասարակական երկխոսության կայացմանը, որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը և իրականացվող ծրագրերի նկատմամբ հասարակության լայն շերտերի վստահության բարձրացմանը:

6. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

95.Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության բովանդակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պահանջներին: Միաժամանակ, հաջողության կարևոր նախապայման են միջոցների օգտագործման նպատակայնության բարձրացումը և նոր ռեսուրսների բացահայտումն ու ներգրավումը:

96. Ապահովելով կրթության համակարգի՝ արդեն իսկ արձանագրված ձեռքբերումների աստիճանական զարգացումն ու ընդլայնումը՝ կրթության առաջընթացն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար հետագա զարգացումները կիրականացվեն ստորև ներկայացվող գերակա ուղղություններով:

6.1. Բացառիկ նվաճումներին ուղղված ծրագրերը խրախուսող ներդրումային քաղաքականություն

97.Նպատակ ունենալով ապահովել կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճ և հիմնվելով առաջանցիկ զարգացումները սատարող միջոցների տարբերակված բաշխման ռազմավարության վրա՝ անհրաժեշտ է

միջոցների որոշ մաս ուղղորդել բարձրակարգ նվաճումներին միտված ծրագրերին: Համապատասխան աջակցություն պետք է ստանան սովորողների ու մանկավարժների այն խմբերը և այն հաստատությունները, որոնք ունակ են բարձրացնելու Հայաստանի կրթական վարկանիշը: Այս միջոցների արդար և նպատակային բաշխումը, ծրագրերի ձեռքբերումներն ու դրանց հրապարակայնացումը ոչ միայն կբարձրացնեն կրթական համակարգի հանդեպ տեղական և միջազգային հանրության վստահությունը, այլև կձևավորեն պահանջարկ ինչպես տեղական, այնպես էլ գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում:

98. Մասնավորապես, նախատեսվում է կրթությանն ուղղված պետական տարեկան հատկացումներում նախատեսել միջոցներ, որոնք մրցութային կարգով կտրամադրվեն կրթական բացառիկ նվաճումներին ուղղված նոր նախաձեռնություններին: Նման ծրագրերի առաջարկներ կարող են ներկայացնել ինչպես ուսումնական հաստատությունները, առանձին մանկավարժներ և նրանց միավորումները, այնպես էլ կրթության ոլորտին առնչվող այլ կազմակերպություններ: Միջոցների բաշխումը կիրականացվի անկախ փորձագիտական հանձնաժողովի կողմից՝ ծրագրերի ընտրության, որակավորման և մրցույթի անցկացման նախապես մշակված հստակ պայմանների և չափանիշների հիման վրա:

6.2. Բարեփոխումներն առաջնորդելու կարողությունների հզորացում

99. Սույն ծրագրի նպատակներին և ուղղություններին համապատասխան կրթական բարեփոխումներն առաջնորդելու պատասխանատվությունը առաջին հերթին կրում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ: Կրթության ոլորտի զարգացման տեմպերը և բարեփոխումների հաջողությունը մեծապես կախված են կառավարման օղակների՝ առաջնորդելու ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունից: Այն ներառում է կառավարման օպտիմալ կառուցվածքային և գործառութային կազմակերպում, համապատասխան կադրային ներուժ, օբյեկտիվ տվյալների հիման վրա որոշումների կայացման արդյունավետ մեխանիզմներ: Այս կարողության հզորացումը կլինի կրթական բարեփոխումների օրակարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: Մասնավորապես՝

1) կուսումնասիրվեն և կգնահատվեն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության զարգացման կադրային և ինստիտուցիոնալ կարողությունները և դրանց հիման վրա կռացիոնալացվեն նախարարության և ենթակա կազմակերպությունների գործառույթները՝

կարողությունները հզորացնելու և առանձնացված ստորաբաժանումների գործառույթները հստակեցնելու նպատակով,

2) նախարարության ռազմավարական կառավարման ներուժը զարգացնելու նպատակով կրթության տարբեր ոլորտները համակարգող համապատասխան վարչությունների գործունեությունը կկազմակերպվի ծրագրերի կառավարման սկզբունքներին համապատասխան: Վարչությունների աշխատակիցների համար կկազմակերպվեն հատուկ վերապատրաստումներ՝ ծրագրերի կառավարման, ֆինանսական վերլուծության, միջոցների ներգրավման և դոնորների հետ աշխատանքների համակարգման ոլորտներում,

3) կմշակվեն կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի պլան և մեխանիզմներ, ներառյալ՝ ծրագրերի արդյունքային ցուցանիշները, չափորոշիչներն ու թիրախները: Կբարելավվի և կամբողջացվի նախարարության «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը», որը կծառայի հավաստի տվյալներով հիմնավորված որոշումներ կայացնելուն և քաղաքականություններ մշակելուն,

4) կֆինանսավորվեն կրթության կարևոր հիմնախնդիրների հետ կապված հետազոտություններ՝ որպես տվյալների վրա հիմնված քաղաքականության իրականացման հիմք,

5) կընդլայնվի շահագրգիռ նախարարությունների, գործարար և քաղաքացիական հանրության, դոնոր կազմակերպությունների մասնակցությունը զարգացման ծրագրերի մշակման, դրանց իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

6.3. Գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարելավում

100. Ե՞վ նախարարությունում, և՞ ուսումնական հաստատություններում կորդեգրվի հասարակությանը հաշվետու և թափանցիկ աշխատառճ: Հաշվետվողականությունը հիմնականում իրագործվելու է սովորողի, ուսումնական հաստատությունների և կառավարման մարմինների մասին հավաստի և վավերական տվյալները շահառուներին հասանելի դարձնելու միջոցով: Մասնավորապես՝

1) կհրատարակվեն կրթության առաջընթացի և հիմնախնդիրների վերաբերյալ տարեկան հանրային զեկույցներ: Դրանցում կարտացոլվեն գերատեսչություններին, աշակերտներին, ուսանողներին, ծնողներին և գործատուներին հետաքրքրող տվյալներ,

2) կիզորացվեն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հասարակայնության հետ կապերի կարողությունները,

3) պարբերաբար կանցկացվեն հանրային և միջազգային փորձագիտական կարծիքի հարցումներ՝ կրթական համակարգի նկատմամբ վստահությունը գնահատելու համար: Հարցումներում կընդգրկվեն Հայաստանի բնակչության տարբեր խմբերի, ինչպես նաև Սփյուռքի և կրթության ոլորտի միջազգային փորձագետների ներկայացուցիչներ: Հարցումները հնարավորություն կտան պարզելու հարցման մասնակիցների կարծիքը Հայաստանի կրթության որակի, տարածաշրջանային և միջազգային մակարդակում Հայաստանի կրթության մրցունակության, Հայաստանի կրթության առաջընթացի և կրթության ապագայի հանդեպ եղած ակնկալիքների վերաբերյալ: Հարցումների արդյունքները կհրապարակայնացվեն,

4) Հայաստանը կշարունակի մասնակցել միջազգային գնահատումներին՝ Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների հետազոտությանը (ԹԻՄՍՍ), կմասնակցի նաև միջազգային գնահատման այլ ծրագրերի՝ կարդալու գրագիտության միջազգային հետազոտության առաջընթաց (ՊԻՐԼՍ, PIRLS) և ուսանողներևի միջազգային գնահատման ծրագիր (ՊԻԶԱ, PISA): Կհրապարակվեն Հայաստանի մասնակցության արդյունքները և դրանց համեմատական վերլուծությունն ինչպես այլ երկրների, այնպես էլ Հայաստանի նախորդ տարիների արդյունքների հետ,

5) կրթության համակարգը ակտիվ դերակատարում կունենա կոռուպցիայի դեմ պայքարում, կիրականացվեն ծրագրեր ինչպես ողջ համակարգի, այնպես էլ առանձին ուսումնական հաստատությունների առանձնահատկություններին համապատասխան՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը:

6.4. Կրթության բովանդակության և չափորոշիչների բարելավում

101. Բովանդակային բարեփոխումներն ուղղված կլինեն կրթությունը տնտեսության, գիտության և հասարակության արդի պահանջներին համապատասխանեցնելուն, ինչը կնպաստի գլխավոր նպատակների արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես՝

1) առաջնայնություն կտրվի մայրենի և օտար լեզուներով հաղորդակցման, ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման, համագործակցության, հետազոտական և ստեղծագործական կարողություններին և հմտություններին: Կմշակվեն մայրենի և օտար լեզուների, հայագիտական

առարկաների, մաթեմատիկայի և բնական գիտությունների, տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների ուսուցման և կիրառման համակողմանի բարելավման հայեցակարգերը,

2) դասավանդման և ուսումնառության ընթացքում առաջնային տեղ կտրվի տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառությանը, սովորողների և դասավանդողների համակարգչային տեխնիկայի օգտագործման կարողությունների ու հմտությունների զարգացմանը, կհարստացվեն ուսումնական էլեկտրոնային միջոցները, ինչը կնպաստի նաև հեռավար ուսուցման զարգացմանը,

3) կշարունակվեն ժամանակակից մանկավարժական գիտական մոտեցումներին համապատասխան՝ արդյունքահեն չափորոշիչների մշակումն ու ներդրումն ինչպես հանրակրթության, այնպես էլ մասնագիտական կրթության ոլորտներում,

4) բարձրագույն կրթության մեջ կընդլայնվեն օտար լեզուներով որոշ մասնագիտական առարկաների դասավանդման և օտարալեզու մասնագիտական գրականության օգտագործման հնարավորությունները,

5) դասագրքերի բովանդակային որակի բարելավման նպատակով մասնագիտական աջակցություն կցուցաբերվի հեղինակային խմբերին և հրատարակիչներին, ելնելով միջազգային լավագույն փորձից՝ կստեղծվեն դասագրքերի մշակման ուղեցույցներ,

6) կխրախուսվեն հանրակրթական և այլ ուսումնական հաստատությունների համայնքային ակտիվությունը, սովորողների մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը,

7) կխրախուսվեն կրթական և գիտական հաստատությունների կապերը, ուսումնառության ընթացքում կընդլայնվի սովորողների գիտական հետազոտությունների ծավալը, ինչպես նաև ուսանողների ընդգրկվածությունը բուհական գիտական հետազոտություններում,

8) կստեղծվեն մասնագիտական կրթական հաստատությունների և տնտեսության համագործակցության և երկխոսության արդյունավետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան կրթական ծրագրերը, մասնագետների պատրաստումն առավել ներդաշնակ դարձնել տնտեսության առաջնային ճյուղերի պահանջարկին,

9) ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունների ընդլայնմանը զուգընթաց կձևավորվի և կգործարկվի կրթության որակի ապահովման և գնահատման համակարգը, հանրակրթության ոլորտում կիրականացվի լիարժեք

անցում դեպի գնահատման օբյեկտիվ մեթոդները և միասնական ավարտական քննությունները:

6.5. Դասավանդող կադրերի կարողությունների հզորացում

102. Կրթության ոլորտի բարեփոխումների և զարգացման ծրագրերի հաջողությունն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորված են մանկավարժների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածությամբ, բարձրակարգ կրթական նվաճումներն առաջնորդելու և կյանքի կոչելու նրանց ընդգրկվածությամբ ու պատրաստակամությամբ:

103. Արդիականացնելով ու բարելավելով մանկավարժական կրթությունը և մասնագիտական օժանդակության համակարգը՝ միաժամանակ կստեղծվեն նպաստավոր պայմաններ առաջադեմ և ստեղծագործ մանկավարժների բացահայտման, խրախուսման, զարգացման և բարեփոխումների գործընթացներում նրանց ակտիվ ներգրավման համար: Մանկավարժական կադրային քաղաքականությունը կներառի հետևյալ միջոցառումները.

1) կմշակվեն և կիրականացվեն մանկավարժական կրթության և շարունակական վերապատրաստման համակարգի համալիր բարեփոխումներ՝ ուղղված մանկավարժական կրթության արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանը,

2) կհստակեցվի մանկավարժների գործունեությունը, ինչպես նաև մանկավարժների պատրաստման համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը,

3) մանկավարժների պարբերական վերապատրաստման և ատեստավորման արդյունավետ մեխանիզմների ներդրման շնորհիվ կապահովվի վերապատրաստման հնգամյա պարբերաշրջան՝ կախված տվյալ մասնագիտության պահանջներից,

4) կընդլայնվեն օտարերկրյա առաջատար բուհերի հետ մանկավարժների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի փոխանակման ծրագրերի ծավալները՝ մեծացնելով դրանց նպատակայնությունը և ազդեցությունը ուսումնական հաստատությունների գործունեության բարելավման վրա,

5) կամբողջականացվի օտարերկրյա ակադեմիական շրջանակներում ակտիվորեն ներգրավված հայազգի գիտնականների մասին տեղեկատվությունը, Հայաստանի բուհերի համար նրանց հետ ակտիվ կապեր հաստատելու հնարավորություններ կստեղծվեն,

6) կշարունակվեն հանրակրթական դպրոցներին որակյալ կադրերով ապահովման, սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրեր ուսուցիչների գործուղման, մանկավարժների նպատակային ընդունելության ծրագրերը: Միաժամանակ, կիստակեցվեն ուսուցիչների աշխատանքի ընդունման մեխանիզմները՝ դրանք դարձնելով առավել հրապարակային ու թափանցիկ՝ որդեգրելով մրցութային կարգով մանկավարժներին աշխատանքի ընդունման սկզբունքը,

7) միջոցներ կձեռնարկվեն բարձրացնելու մանկավարժի գործունեության գրավչությունը և հասարակական վարկը: Մասնավորապես՝

ա) շարունակելով մանկավարժների աշխատավարձի բարձրացման քաղաքականությունը՝ կներդրվի գործունեության արդյունավետության վրա հիմնված տարբերակված մոտեցում: Այդ նպատակով կանցկացվի մանկավարժների պարբերական ատեստավորում՝ հիմքում դնելով գործունեության օբյեկտիվ ցուցանիշները,

բ) կմշակվեն լավագույն ուսուցիչների հայտնաբերման արդյունքահեն չափանիշներ և խրախուսման մեխանիզմներ:

6.6. Համակարգի օպտիմալացում, ինստիտուցիոնալ բարեփոխումներ

104. Միջոցների արդյունավետ օգտագործման ուղղություններից կլինեն համակարգի կառուցվածքային բարեփոխումները: Հաստատությունների ֆինանսավորման քաղաքականությունից աստիճանաբար անցնելով ծրագրերի ֆինանսավորմանը՝ միաժամանակ կիստակեցվեն կրթական հաստատությունների տեսակներն ու տարածքային բաշխվածության սկզբունքները՝ ապահովելով դրանց առավել արդյունավետ համապատասխանությունը մարզային սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին և հասարակության կրթական պահանջմունքներին: Կձևավորվեն և կզարգացվեն կրթական հաստատություններ, որոնք իրենց պայմաններով և կրթական ծառայությունների որակով համադրելի կլինեն օտարերկրյա նմանատիպ հաստատություններին: Մասնավորապես.

1) կմշակվի և կներդրվի միջին և բարձրագույն մասնագիտական, հետբուհական կրթության համալիր վերակառուցման ռազմավարություն՝ նպատակ ունենալով ձևավորել որակյալ, արդյունավետ, պահանջարկին արձագանքող ուսումնական հաստատություններ,

2) հանրակրթական դպրոցների ավագ դասարանների համախմբման միջոցով կձևավորվի առանձին գործող ավագ դպրոցների ցանց, որում կիրականացվի հոսքային խորացված ուսուցում՝ ապահովելով սովորողների լիարժեք

պատրաստվածությունը հետագա մասնագիտական կրթությանն ու գործունեությանը: Միաժամանակ կմշակվի միջնակարգ դպրոցի կազմում գործող ավագ դպրոցների հզորացման և որակի բարելավման ծրագիր,

3) կշարունակվեն կրթական օբյեկտների հիմնանորոգման, կապիտալ շինարարության, այդ թվում՝ ջեռուցման համակարգի վերականգնման, ուսումնալաբորատոր հզորությունների, համակարգչային համակազմի և ցանցի զարգացման և ամբողջականացման ծրագրերը,

4) հավասար մրցակցային պայմաններ կստեղծվեն պետական և ոչ պետական կրթական հաստատությունների համար՝ մեծացնելով ոչ պետական հաստատությունների կրթական ծառայություններ մատուցելու օրինական հնարավորություններն ու պատասխանատվությունը,

5) կշարունակվի հաստատությունների ներքին օպտիմալացումը խրախուսող, ֆինանսական միջոցների տնօրինման լիազորությունները մեծացնելու քաղաքականությունը:

6.7. Միջազգային ցանցերում մասնակցության ընդլայնում

105. Հայաստանի կրթական համակարգի եվրոպական ինտեգրմանը միտված քաղաքականությունը և մասնակցությունը բարձրագույն կրթության բարեփոխումների ոլորտում առաջնայնություն համարվող Բոլոնիայի գործընթացին շարունակում են մնալ միջազգային համագործակցությունը և ցանցերում գործուն մասնակցության ներուժը խթանող գործոններ: Շարունակելով ջանքերն այդ ուղղությամբ՝ պետությունը զուգահեռաբար կաջակցի քաղաքացիների, խմբերի և հաստատությունների մրցունակության և համագործակցության կարողությունների հզորացմանն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային մակարդակներում: Ուսանողներին և բուհերին նպատակային կրթաթոշակների, դրամաշնորհների և վերապատրաստման ավելի մեծ հնարավորություններ կընձեռվեն, որոնք միտված կլինեն օտարերկրյա լավագույն համալսարանների հետ փոխանակման ծրագրերի և համագործակցության զարգացմանը: Կխրախուսվեն և աջակցություն կստանան նաև Հայաստանի և արտերկրի դպրոցների միջև փոխանակումները:

106. Հայաստանի կրթական համակարգի զարգացման և միջազգային կապերի հաստատման կարևորագույն պաշար է Սփյուռքը: Կխորացվեն և կամրապնդվեն Սփյուռքի հետ գիտակրթական կապերը, միջազգային համբավ ունեցող սփյուռքահայ մասնագետների համար հնարավորություններ կստեղծվեն դասավանդելու Հայաստանի կրթօջախներում՝ ներգրավելով նրանց կրթության

համակարգի զարգացման ծրագրերում: Միաժամանակ, կշարունակվի աջակցությունը Սփյուռքի կրթօջախներին՝ նպաստելով հայապահպանման խնդիրների լուծմանն ու միջմշակութային երկխոսության զարգացմանը:

107. Այս ոլորտում գործունեության հիմնական ուղղությունները.

1) կստեղծվի տեղեկատվական բազա սփյուռքահայ մասնագետների մասին և կներդրվեն խրախուսող մեխանիզմներ նրանց և Հայաստանի համապատասխան մասնագետների և հաստատությունների արդյունավետ համագործակցության համար,

2) ակտիվ մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին,

3) նպատակային մասնակցություն Եվրոպական միություն, Եվրոպայի խորհուրդ, ԱՊՀ, ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում մասնագիտական կառույցների աշխատանքներին և ծրագրերին՝ զուգահեռաբար ակտիվացնելով միջբուհական համագործակցությունը արտասահմանյան առաջատար բուհերի հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով,

4) Հայաստանում միջազգային կրթական համաժողովների կազմակերպումը և մասնակցությունը այլ երկրներում կազմակերպվող խոշոր կրթական համաժողովներին,

5) տեխնիկական աջակցություն կցուցաբերվի բուհերին, և ուսուցողական ծրագրեր կկազմակերպվեն Եվրամիության և բարձրագույն կրթության այլ տեխնիկական համագործակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով:

7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

108. Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը կապահովվի ռազմավարական մոտեցումներին և գերակայություններին համապատասխան նպատակային ծրագրերով, որոնք կդառնան ներկայումս իրականացվող հիմնական ծրագրերի տրամաբանական շարունակությունը: Իրականացվող ծրագրերը և բարեփոխումների ռազմավարությունները կվերանայվեն՝ գլխավոր նպատակներին և ռազմավարական ուղղություններին համապատասխան:

7.1. Հանրակրթություն

109. Կրթության բնագավառի բարեփոխումների և զարգացման ծրագրերի գերակշիռ մասը բաժին է ընկնում հանրակրթության ոլորտին: Իրականացվող ծրագրերը ներառում են ինչպես պետական բյուջեից, այնպես էլ դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրեր: Դրանք առավելապես վերաբերում են հանրակրթական դպրոցներին և հիմնական հանրակրթական ծրագրերին ու ընդգրկում են բովանդակային, կառուցվածքային և կառավարման խնդիրները: Ստորև ներկայացվում են ոլորտի հիմնական ծրագրային ուղղությունները, որոնցում ներառված են նաև հատուկ կրթության, նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտները:

1) 12-ամյա կրթակարգի ներդրում

ա. ապահովել հանրակրթության պետական նոր չափորոշչին համապատասխան առարկայական ծրագրերի մշակումն ու դասագրքերի հրատարակումը,

բ. ստեղծել առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշտադիտարկման, շարունակական բարելավման մեխանիզմներ,

գ. ներդնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, նրանց առաջադիմության գնահատման ժամանակակից, բազմագործոն ձևեր և մեթոդներ,

դ. կատարելագործել դպրոցի ավարտական և բուհական ընդունելության քննությունների միասնական համակարգը,

ե. նոր մշակումներին համապատասխան՝ ապահովել ուսուցիչների վերապատրաստումներ:

2) Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում

ա. բարելավել համակարգչային տեխնիկայով ու ծրագրային փաթեթներով հանրակրթական հաստատությունների համակարգչային ապահովվածությունը,

բ. ընդլայնել Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցը՝ ընդգրկելով բոլոր դպրոցները,

գ. բարելավել հանրակրթական հաստատություններում համակարգչային գրագիտության մակարդակը, «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման որակը,

դ. ընդլայնել ուսումնական գործընթացում տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառումը,

ե. մշակել ժամանակակից էլեկտրոնային ուսումնական պաշարներ:

3) Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի կատարելագործում

ա. ապահովել հոսքային ուսուցման կազմակերպումը՝ սովորողների հակումներին ու նախասիրություններին համապատասխան և նախապատրաստել մասնագիտական կրթություն ստանալուն,

բ. ստեղծել ժամանակակից գրադարաններ (ռեսուրսային կենտրոններ)՝ համալրելով անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և տպագիր ու էլեկտրոնային գրականությամբ,

գ. ստեղծել ավագ դպրոցի տարբեր հոսքային ուսուցման համար նախատեսված ուսումնամեթոդական համալիրներ,

դ. բարձրացնել ավագ դպրոցի մանկավարժական կադրերի մասնագիտական որակը և մանկավարժական բուհերում ներդնել ավագ դպրոցների մանկավարժների պատրաստման մագիստրոսական ծրագրեր:

4) Մանկավարժական կրթության որակի, արդյունավետության և հեղինակության բարձրացում

ա. մանկավարժական կրթության բովանդակությունը համապատասխանեցնել հանրակրթության արդի պահանջներին,

բ. մանկավարժության բնագավառի գիտական հետազոտություններն ուղղորդել հանրակրթության բարեփոխումների արդյունավետության բարձրացմանը,

գ. խրախուսել և ընդլայնել մանկավարժներ պատրաստող ուսումնական հաստատությունների, ինչպես նաև դպրոցների միջև համագործակցությունը:

5) Մանկավարժի գործունեության վարկի բարձրացում

ա. մշակել և ներդնել մանկավարժների խրախուսման արդյունքահեն չափանիշներ և մեխանիզմներ,

բ. խրախուսել մանկավարժների մասնագիտական ընկերակցությունների ձևավորումը և նպաստել դրանց զարգացմանը,

գ. հրապարակայնացնել մանկավարժների լավագույն փորձը և նվաճումները:

6) Դպրոցների ապահովում մանկավարժական կադրերով

ա. ներդնել մանկավարժական կադրերի և դրանց պահանջարկի տեղեկատվական բազա,

բ. բարելավել մանկավարժական բուհերում նպատակային ընդունելության, սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրեր մանկավարժների գործուղման համակարգերը:

7) Մանկավարժների մասնագիտական զարգացման համակարգի բարելավում

ա. բարձրացնել մանկավարժների վերապատրաստման արդյունավետությունը,

բ. խրախուսել մանկավարժական նորարարությունները:

8) Աշակերտների բարձրակարգ նվաճումների խրախուսում

ա. ստեղծել աշակերտների և աշակերտական խմբերի ընդունակությունների դրսևորման նպաստավոր պայմաններ,

բ. ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների (խմբերի) մասնակցությունը միջազգային օլիմպիադաներին, ստուգատեսներին, մրցույթներին և այլ միջոցառումներին ու ծրագրերին:

9) Արտակարգ ընդունակություններ ունեցող երեխաների զարգացման նպաստավոր պայմանների ստեղծում

ա. մշակել արտադասարանական և արտադպրոցական դաստիարակության համակարգի զարգացման հայեցակարգ,

բ. մշակել և ներդնել աշակերտների կրթական, գեղագիտական, տեխնիկական, մարզական նախասիրությունների բավարարման արդյունավետ համակարգ,

գ. ներդնել աշակերտների ստեղծագործական, հետազոտական և նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ՝ ուղղված ինչպես աշակերտներին, այնպես էլ նրանց մանկավարժներին և դպրոցներին:

10) Հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունների ընդլայնում

ա. իրականացնել հանրակրթական դպրոցների ցանցի միջոցով ներառական կրթություն ընդգրկուն կազմակերպումը,

բ. ներդնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրականացնող դպրոցներին մեթոդական և նյութական միջոցներով օժանդակության համակարգ,

գ. խթանել դպրոցների, ինչպես նաև օտարերկրյա համանման դպրոցների և կազմակերպությունների հետ կապերն ու համագործակցությունը,

դ. վերանայել հանրակրթության ոլորտի օրենսդրական դաշտը՝ ներառական կրթության միասնական քաղաքականության ապահովման տեսանկյունից:

11) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և կրթության մեջ նրանց ներգրավման արդյունավետ համակարգի ձևավորում

ա. բարելավել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրման չափորոշիչները, գործիքակազմը և մեխանիզմները,

բ. բարելավել կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգը,

գ. ընդլայնել հանրակրթական դպրոցների համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների հետ:

12) Հատուկ դպրոցների համակարգի օպտիմալացում

ա. վերանայել հատուկ դպրոցների տիպերը, դրանց ենթակայության և տարածքային բաշխվածության չափանիշները,

բ. ներառական դպրոցների ցանցի ընդլայնմանը զուգընթաց՝ կրճատել հատուկ դպրոցների թիվը,

գ. ապահովել հատուկ կրթության ճյուղերին համապատասխան մեկական հատուկ դպրոցի գործունեությունը՝ որպես համապատասխան ճյուղի ռեսուրսային և գիտագործնական կենտրոն:

13) Նախադպրոցական կրթության որակի և մատչելիության ապահովում

ա. կատարելագործել նախադպրոցական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և կառավարման համակարգը,

բ. ապահովել նախադպրոցական կադրերի արդյունավետ մասնակցությունը վերապատրաստման, կատարելագործման և ատեստավորման ծրագրերին,

գ. բարելավել նախադպրոցական ծառայությունների իրականացման նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքերը,

դ. մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիություն՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար:

7.2. Մասնագիտական կրթություն

110. Կրթության բնագավառի հետագա զարգացումներում առաջնային տեղ է տրվելու մասնագիտական կրթության ոլորտին: Բարձրագույն կրթության ներկա բարեփոխումները հիմնականում ուղղված են Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրականացմանը: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում արդեն իրականացվում են բարեփոխումներ, որոնք նույնպես միտված են եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը: Շարունակելով ընթացիկ ծրագրերը՝ կմշակվի մասնագիտական կրթության համալիր վերակառուցման ռազմավարություն բարեփոխումներն արագացնելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

7.2.1. Նախնական և միջին մասնագիտական կրթության զարգացում

1) Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ինտեգրում միասնական եվրոպական կրթական տարածքին

ա. խթանել մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների ինտեգրումը կրթության գլոբալ համակարգերին,

բ. ՄԿՈՒ որակավորումների համակարգը համապատասխանեցնել որակավորումների եվրոպական շրջանակին,

գ. ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգ,

դ. բարձրացնել համակարգի մասնագետների իրազեկվածությունը այլ երկրների փորձի և լավագույն ձեռքբերումների վերաբերյալ,

ե. միանալ կոպենհագենյան հռչակագրին և գործընթացին,

զ. օժանդակել ՄԿՈՒ հաստատությունների ցանցավորմանը:

2) ՄԿՈՒ համակարգի արդյունավորության և արդյունավետության ապահովում.

ա. ստեղծել մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգ,

բ. խթանել սոցիալական գործընկերությունը և երկխոսությունը,

գ. ձևավորել ՄԿՈՒ հաստատությունների արդյունավետ ցանց,

դ. սահմանել նախնական և մասնագիտական կրթության մասնագիտությունների առաջնահերթություններ՝ ելնելով ՀՀ տնտեսության գերակայություններից, և ներդնել մասնագետների պահանջարկի ձևավորման արդյունավետ համակարգ,

դ. բարելավել ՄԿՈՒ հաստատությունների ուսումնանյութական բազան,

ե. բարելավել հաստատությունների հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը:

7.2.2. Բարձրագույն և հետբուհական կրթություն

1) եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան՝ ներդնել որակավորումների ազգային շրջանակ,

2) ստեղծել որակի ապահովման ազգային համակարգ, ինչպես նաև զարգացնել, հզորացնել ու ամրապնդել նրա կարողությունները,

3) ձևավորել և ներդնել բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ և կայուն համակարգ,

4) ապահովել բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթերի փոխճանաչումը և համարժեքությունը,

5) խթանել ուսանողների շարժունությունը և Հայաստանի կրթական համակարգի գրավչությունը,

6) խթանել բուհերի և գործատուների (աշխատաշուկայի) փոխադարձ կապը, նպաստել սովորողների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի տեղավորման խնդիրների լուծմանը:

7.2.3. Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության հնարավորությունների ստեղծում

1) ապահովել կրթության շարունակականությունը,

2) բարելավել մեծահասակների կրթության ոլորտի օրենսդրությունը:

7.3. Կառավարման համակարգի բարելավում

1) ձևավորել բարեփոխումներն առաջնորդող թիմ և իրականացնել վերապատրաստում՝ ծրագրերի կառավարման, ֆինանսական վերլուծության, միջոցների ներգրավման և դոնորների համակարգման ոլորտներում,

2) մշակել ծրագրի մոնիթորինգի պլան և մեխանիզմներ,

3) զարգացնել և ամբողջացնել կրթության կառավարման տեղեկատվական համակարգը,

4) ապահովել շահագրգիռ նախարարությունների, գործարար և քաղաքացիական հատվածի, հիմնական դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված խորհրդատվական մարմնի գործունեությունը,

5) պարբերաբար ներկայացնել կրթության առաջընթացի և հիմնախնդիրների վերաբերյալ տարեկան հանրային զեկույցներ:

8. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

111. Ծրագրի իրականացման պատասխանատուն և համակարգողը կլինի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

112. Ծրագիրը կիրականացվի առանձին նպատակային ծրագրերի միջոցով, որոնք կարտացոլվեն պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում և պետական բյուջեում: Ենթածրագրերի մշակումը և իրականացումը կկատարվեն պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Նպատակային ծրագրերի ցանկում կընդգրկվեն նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը, որոնք համահունչ են Ծրագրի նպատակներին և ուղղված են դրա խնդիրների իրականացմանը:

113. Նախարարությունը կմշակի և կներդնի նպատակային ծրագրերի տեղեկատվական համակարգ, որտեղ կարտացոլվի համապարփակ տեղեկատվություն ինչպես պետական, այնպես էլ միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

114. Ծրագրի իրականացման ընդհանուր մոնիթորինգը և գնահատումը կիրականացվեն սահմանված արդյունքային ցուցանիշների հիման վրա՝ «բազային տարի-հաշվետու տարի» համեմատության մեջ (տե՛ս Աղյուսակ 5): Միաժամանակ, 2011 թվականին կմշակվի և կհաստատվի կրթության բնագավառի ցուցանիշների ամբողջական համակարգը՝ դրանց մեթոդաբանությունը և կրթական ծրագրերի դասակարգումը համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին:

115. Ծրագրի իրականացման մոնիթորինգի և գնահատման համակարգի կայացման տեսանկյունից կարևոր խնդիր է տվյալների հավաքագրման մեխանիզմների հստակեցումը: Տվյալների հիմնական աղբյուր կծառայեն ԱՎԾ պաշտոնական հրապարակումները, ներառյալ՝ ՏՏԿԱՀ արդյունքները, և Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը: Կօգտագործվեն նաև ուսումնական հաստատությունների տեսչական և լիցենզիայի պայմանների ստուգումների արդյունքները: Ըստ անհրաժեշտության՝ կիրականացվեն համապատասխան հետազոտություններ՝ ներգրավելով միջազգային և հասարակական կազմակերպություններ:

116. Կրթության բնագավառում զարգացումների մոնիթորինգի ցուցանիշները կհավաքագրվեն և կվերլուծվեն գենդերային և տարածքային (ըստ մարզերի) կտրվածքներով: Ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների վերաբերյալ կհրապարակվեն

տարեկան հաշվետվություններ, իսկ Ծրագրի գնահատումը կիրականացվի 2 շրջափուլով՝ միջանկյալ (2013թ) և ամփոփիչ (2015թ):

Աղյուսակ 5. Ծրագրի մոնիթորինգային ցուցանիշների համակարգը

հ/հ	*Ցուցանիշի անվանումը*	*Կապը այլ ծրագրերի հետ*	*Ելակետ*	*Միջանկյալ նպատակ*	*Ծրագրային նպատակ*	*Աղբյուր*
1	Նախադպրոցական կրթությունում համախառն ընդգրկվածության գործակիցը (%)	ԿԲՀ-1	**24.3%** (2009թ.)	**5 % աճ**	**10 % աճ**	ՀՀ ԱԿԾ պաշտոնական հրապարակում-ներ
2	Նախադպրոցական կրթությունում 5 տարեկանների զուտ ընդգրկվածության գործակից (%)	ԿԲՀ-1	**60%** (2008թ, մոտավոր գնահատական)	**75%**	**90%**	ՀՀ ԱԿԾ պաշտոնական հրապարակում-ներ, ՀՀ ԿԳՆ
3	Նոր ներդրված ՆՈՀ –ների թիվը	ԿԲՀ-1	**35** (2010թ.)	**120**	**180**	ՀՀ ԿԳՆ
4	Համախառն ընդգրկվածության գործակիցը հիմնական դպրոցում, (%)	**ՀՁՆ - 2.3.12 ՄՀՀ (GCI) - 5.01**	**92.1** (2009թ.)	**96%**	**99%**	ՀՀ ԱԿԾ պաշտոնական հրապարակում-ներ, ՀՀ ԿԳՆ
5	Համախառն ընդգրկվածության գործակիցը ավագ դպրոցում, ներառյալ՝ նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերը(%)	**ՀՁՆ - 2.3.13 ՄՀՀ (GCI) - 5.01**	**85.9%** (2008թ, մոտավոր գնահատական)	**89 %**	**95%**	ՀՀ ԱԿԾ պաշտոնական հրապարակում-ներ, ՀՀ ԿԳՆ
6	Ներառական կրթության համակարգում ընդգրկված դպրոցների թիվը	ԿԲՀ 2	**65** (2010թ.)	**90**	**110**	ՀՀ ԿԳՆ
7	ՄՄՈՒՀ –ներում սովորողների թիվը (10000 բնակչի հաշվով)	**ԿԲՀ 3,4 ՄՀՀ (GCI) 5.02 ՀՁՆ 2.3.16**	**92,3** (2010թ)	3% աճ բազային տարվա նկատմամբ	10% աճ բազային տարվա նկատմամբ	ՀՀ ԱԿԾ պաշտոնական հրապարակում-ներ, ՀՀ ԿԳՆ
8	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը (10000 բնակչի	**ԿԲՀ 3,4 ՄՀՀ (GCI) 5.02 ՀՁՆ 2.3.16**	**352,8** (2010թ)	5% աճ բազային տարվա նկատմամբ	10% աճ բազային տարվա նկատմամբ	ՀՀ ԱԿԾ պաշտոնական հրապարակում-ներ, ՀՀ ԿԳՆ

	հաշվով)					
9	Ընդգրկվածության համակենտրոնացման գործակիցը, այդ թվում՝	ՀՁՆ 2.3.16	2011թ. **բազային հետազոտություն**			ՀՀ ԿԳՆ
9.1	*նախադպրոցական կրթությունում*			5% նվազում բազային տարվա նկատմամբ	15% նվազում բազային տարվա նկատմամբ	
9.2	*ավագ դպրոցում*			5% նվազում բազային տարվա նկատմամբ	12% նվազում բազային տարվա նկատմամբ	
9.3	*Բուհերում*			5% նվազում բազային տարվա նկատմամբ	10% նվազում բազային տարվա նկատմամբ	
10	Աշակերտ / համակարգիչ հարաբերակցությունը պետական հանրակրթական դպրոցներում, 1 000 աշակերտի հաշվով	ՄՀՀ (GCI) 5.06	30.2 (2010թ.)	40	50	ՀՀ ԿԳՆ
11	Ինտերնետային կապով ապահովված հանրակրթական դպրոցների թիվը դպրոցների ընդհանուր թվի նկատմամբ, %	ՄՀՀ (GCI) 5.06	60.4% (2010թ.)	76.2%	100%	ՀՀ ԿԳՆ
12	Հիմնական դպրոցի քննությունները դրական գնահատականներով հանձնողների թիվը , %	ԿԲՀ 2 ԿԲՀ 6	92.3% (2010թ)	95.5%	99%	ՀՀ ԿԳՆ
13	Միջնակարգ դպրոցի քննությունները դրական գնահատականներով հանձնողների թիվը , %	ԿԲՀ 2 ԿԲՀ 6	96.8% (2010թ)	98%	99%	ՀՀ ԿԳՆ
14	Հանրակրթական դպրոցների 4-րդ և 8-րդ դասարանների աշակերտների՝ մաթեմատիկական և բնական գիտությունների գծով գիտելիքների գնահատման միջին արդյունքները ԹԻՄՍՍ համակարգով	ՄՀՀ (GCI) 5.04 ՀՁՆ 2.3.15	2011թ. բազային տարի	-	աճ 8%-ով	ԹԻՄՍՍ-ի հաշվետվու-թյուններ
15	Հանրակրթական դպրոցների ատեստավորված ուսուցիչների թիվը, (%)	ԿԲՀ 6 ՄՀՀ (GCI) 4.09	0 (2010թ.)	**55%**	**95%**	ՀՀ ԿԳՆ

16	Կրթական ծառայությունների որակից սովորողների ծնողների և գործատուների բավարարվածության աստիճանը, այդ թվում՝		.			The Global Competitiveness Report
16.1	*ծնողների բավարարվածության աստիճանը տարրական կրթությունից*	**ԿԲՀ 2 ՄՀՀ (GCI) 4.09**	**3.3** (2009թ.)	**3.7**	**4.1**	
16.2	*գործատուների բավարարվածության աստիճանը մասնագիտական կրթությունից*	**ՄՀՀ (GCI) 5.03**	**3.0** (2009թ.)	**3.4**	**3.8**	
17	Հավատարմագրում անցած մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը, այդ թվում՝	**ՄՀՀ (GCI) 5.03**				ՀՀ ԿԳՆ
17.1	*Բուհեր*		**0** (2010 թ.)	**5**	**10**	
17.2	*ՄՄՈՒՀ - ներ*		**0** (2010թ.)	**5**	**10**	

«ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Առաջարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով հաստատված ծրագրի /այսուհետ՝ ծրագիր/ ներածության 1-ին կետի 2-րդ նախադասությունն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ «մշակվել է» բառերից հետո անհրաժեշտ է հանել բոլոր փակագծերը, «հրամանագիր» բառը փոխարինել «հրամանագրի» բառով, «Կայուն զարգացման ծրագրի» բառերը հանել, իսկ «որոշում» բառը փոխարինել «որոշման» բառով:	Ընդունված է	Բառերը փոխարինված է և «Կայուն զարգացման ծրագրի» արտահայտությունը հանված է
ՀՀ կառավարություն	Նախագծի կառուցվածքն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, մասնավորապես՝ նախագծից անհրաժեշտ է հանել «Բովանդակություն» և «Հապավումների ցանկ» դրույթները:	ԸՆդունված է	«Բովանդակություն» և «Հապավումների ցանկ»-ը դրույթները հանված է:
ՀՀ կառավարություն	Ծրագրի 21-րդ և 22-րդ կետերում օտարալեզու հապավումներն ու բառերն անհրաժեշտ է նշել հայերեն տառադարձությամբ՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի: Նույն դիտողությունը վերաբերում է ամբողջ տեքստին:	Ընդունված է	Օտարալեզու հապավումները փոխարինված է հայերեն տառադարձությամբ:
ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծում ավելացնել հոդված, որով ուժը կորցրած կճանաչվի <<Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 2001թ. հունիսի 26-ի ՀՕ-199 օրենքը:	Ընդունված է	

ՀՀ կառավարություն	18-րդ կետում «համախմբման» բառը փոխարինել «ցանցի ձևավորման» բառերով	Ընդունված է	
ՀՀ կառավարություն	24-դ կետում «ծրագրերով» բառը փոխարինել «միջոցառումներ» բառով	Ընդունված է	
ՀՀ կառավարություն	30-րդ կետում «վարձակալության» բառը փոխարինել «շարունակական մատակարարաման» բառերով:	Ընդունված է	
ՀՀ կառավարություն	31-րդ կետում դասագրքերի որակի վերաբերյալ դրույթը կարող է վերաբերվել միայն որոշ դասագրքերին՝ բովանդակային առումով:	Ընդունված է	Կետը խմբագրված է:
ՀՀ կառավարություն	32-րդ կետը վերախմբագրման կարիք ունի՝ 12-ամյա կրթակարգի պահանջները հստակ ներկայացնելու առումով:	Ընդունված է	Կետը վերախմբագրված է
ՀՀ կառավարություն	34-րդ կետում ավելացնել՝ Աշխատանքներ են տարվում նորարարական տեխնոլոգիաների ներդրման, էլեկտրոնային պաշարների և բաց կրթական պլատֆորմի ստեղծման ուղղությամբ	Ընդունված է	Կետը ավելացված է:
ՀՀ կառավարություն	36-րդ կետը վերախմբագրման կարիք ունի՝ նշելով համակարգի տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցվածության մակարդակի խնդիրը;	Ընդունված է	Կետը խմբագրված է:
ՀՀ կառավարություն	82-րդ կետում ավելացնել միջազգային ռազմավարական փաստաթղթերի շարքում ավելացնել «Հյոգոյի» 2005-2015թթ. գործողությունների ծրագիրը:	Ընդունված է	Ծրագրի անվանումը ավելացված է:
ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	1. Սույն ծրագրով նախադպրոցական տարիքը նախատեսված 6 տարեկանը, որն արդեն դպրոցական տարիք է, առաջարկում եմ այն դարձնել 5 տարեկան, որը նախադպրոցական հիմնարկներում 2015 թվականին նրանց ներգրավվածությունը 90 տոկոսի հասցնելու ծրագրային կետի հիման վրա կարող է հիմք հանդիսանալ հետագայում 12-ամյա հանրակրթությունը սկսել 5 տարեկանից, որով կլուծվել շատ խնդիրներ, օրինակ՝ երեխաները դպրոցը կավարտեն 17 տարեկանում:	Ընդունված է:	Նախագծի աղյուսակ 5-ի 2-րդ տողում կատարված է փոփոխություն:
ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	2. 2011-2015թ.թ. Կրթության զարգացման պետական ծրագիրը պետք է իր մեջ կարմիր թելով ամրագրի պետության կողմից որդեգրած ներառական կրթության *«Կրթություն բոլորի համար»* քաղաքականությունը: Այդ նպատակով առաջարկում եմ ծրագրի նախագծի 7-րդ «Կրթության զարգացման հիմնական ծրագրային ուղղությունները» գլխի 10-րդ կետն ձևակերպել հետևյալ կերպ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	Ընդունված է մասամբ	նախագծի 7-րդ գլխի 10-րդ կետում ավելացված է նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ. “դ. վերանայել հանրակրթության ոլորտի օրենսդրական

	ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացմանն ուղղված գործողությունները համակարգելու, ներառական կրթության գաղափարախոսության համատարած ներդրման հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ միասնական քաղաքականություն սահմանելու միտումով նպատակահարմար է ունենալ ամբողջացված մեկ օրենք: Արդյունքում կունենանք երեխայի անհատական տարբերությունից ու հաշմանդամությունից անկախ կրթության իրավունքի միասնական իրավական կարգավորում, որը կերաշխավորի բոլորի համար կրթության հավասարության իրավունքը, այսինքն կիրականացվի պետության կողմից ստանձնած «Կրթություն բոլորի համար» միջազգային պարտավորությունները»:		դաշտը՝ ներառական կրթության միասնական քաղաքականության ապահովման տեսանկյունից:”
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	3. Նույն գլխի 10-րդ կետի ա. ենթակետը ձևակերպել հետևյալ կերպ. «մինչև 2015 թվականը հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում անցնել համընդհանուր ներառական կրթության ներդրման:»:	Ընդունված չէ:	Ներառական կրթության ընդլայնումը ծրագրի նպատակադրումների շարքում է, սակայն մինչև 2015 թ. հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ներդրումը իրատեսական չէ: Նախագծով նախատեսված է ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը հասցնել 10%-ի:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	4. «Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ ծրագրով նախատեսված բուհական կրթության ֆինանսավորման բարեփոխումների համար անհրաժեշտ միջոցառումները ներառել սույն Պետական ծրագրում: Վերոնշյալ ծրագրով մասնավորապես առաջարկվում է ուսումնական հաստատությունների (հանրակրթական, թե բուհական) կառավարման ապակենտրոնացում, ինքնավարության բարձրացում,	Ընդունված չէ:	Նախագծի <Ծրագրային ուղղություններ> բաժնում արդեն իսկ ամրագրված են բարձրագույն

	ապաքաղաքականացում և խորհուրդների հաշվետվողականության ու գործունեության թափանցիկության բարձրացում:		կրթության ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրման, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման դրույթները:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	5. ՀՀ «Կրթության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսվել է կրթության բնագավառի բարենպաստ հարկային քաղաքականություն: Շահութահարկի քաղաքականության մեջ, ինչպես պահանջում են Սահմանադրությունն ու օրենքը, անկախ դպրոցների և բուհերի կազմակերպա-իրավական ձևերից՝ հավասար իրավական հարկային դաշտում աշխատելու համար կրթության բնագավառում ընդունել համապատասխան իրավական ակտեր: Օրինակ՝ դպրոցներում 20 տոկոս հարկ են վճարում յուրաքանչյուր նոր ծեռք բերած համակարգչի կամ գույքի, կամ ծրագրի զարգացման նպատակով նոր շենք կառուցելու համար, որից ազատված են ՊՈԱԿ հանրակրթական ուսումնական հաստատությունները: Այն պետք է կիրառվի նաև ոչ պետական հանրակրթական հաստատությունների համար:	Ընդունված չէ:	“Շահութահարկի մասին” ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով հանրակրթական ուսումնական հաստատություններն ազատված են շահոթահարկից:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	6. Մանկավարժի որակավորումը բացառել 2.5 ամյա ՄՄՈՒՀ-ում:	Ընդունված չէ:	Առաջարկը հիմնավորված չէ: Այն կքննարկվի “Որակավորումների ազգային շրջանակի” ներդրման գործընթացում:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	7.էջ 14-ի վերից 6-րդ տողում «հնգամյա» բառը դարձնել «հնգօրյա»:	Ընդունված չէ:	Մանկավարժների վերապատրաստումն ու ատեստավորումը կազմակերպվել է հնգամյա պարբերակաշրջանով:
Աժ պատգամավոր	8. ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքում վերականգնել դասագրքերի	Ընդունված	Համաձայն

Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	ստեղծման փորձաշրջանը, որովհետև ծրագրի «Ծրագրամեթոդական ապահովումը և ուսումնանյութական բազան» վերնագրի տակ ափսոսանք է հայտնվում, որ դասագրքերը ստեղծվում են շատ կարճ ժամանակամիջոցում, ինչը հնարավորություն չի տալիս լրջորեն փորձարկելու, խմբագրելու դրանց բովանդակությունը:	չէ:	«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի դասագրքերի փորձաքննությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմի սահմանած կարգով:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	9. Նախատեսել օրենքի փոփոխություն՝ «Հանրակրթության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ ոչ պետական ուսումնական հաստատություններին շահութահարկից ազատելու մասին հարցը:	Ընդունված չէ:	"Շահութահարկի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով հանրակրթական ուսումնական հաստատություններն ազատված են շահոթահարկից:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	10.Սույն ծրագիրն իր մեջ պետք է պարունակի պետության կողմից կրթությն ոլորտում որդեգրած քաղաքականության բոլոր ուղղությունները՝ սկսած միջազգային պարտավորություններից՝ Բոլոնիայի գործընթացի իրականացմանը միտված ըստ մոդուլների ուսման վարձի ներդրում, բարձրագույն կրթության ոլորտի ֆինանսական բարեփոխումներ, վերջացրած՝ Հայաստանի ազգային մրցունակության 2010թ, զեկույցում մատնանշված բուհական կրթության զարգացման ռազմավարական այլընտրանքների առաջարկությունը:	Ընդունված չէ:	Ծրագրի նախագծում բոլոնիայի գործընթացի սկզբունքներն արդեն իսկ ներառված են:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	11.Մինչև ասպիրանտական և մագիստրոսական տեղերի կրճատումը կամ առնվազն դրան զուգահեռ հատբուհական կրթական համակարգում ներդնել այնպիսի մեխանիզմ, որը բարձրագույն կրթություն ունեցող և ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած երիտասարդներին կխրախուսի շարունակել իրենց ուսումն ու գիտական-գետազոտական գործունեությունը:	Ընդունված չէ:	Նախագծով ասպիրանտական և մագիստրոսական տեղերի կրճատում չի նախատեսվում: Միաժամանակ, զինված ուժերում պարտադիր զինվորական

			ծառայություն անցած անձանց համար գործող օրենսդրությամբ ամրագրված են համապատասխան արտոնությունն եր:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	12.Բուհերում վերականգնել ռազմական ամբիոնները՝ սպայական կազմի պատրաստման համար խիստ օգտակար մրցակցային դաշտ ստեղծելու հեռանկարով:	Ընդունված չէ:	Առաջարկությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Ռազմագիտության ամբիոնների վերականգնման նպատակահարմարու-թյունը պետք է քննարկվի “Զինապարտության մասին” ՀՀ օրենքի համատեքստում:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	13.Առավել ակտիվ համագործակցություն հաստատել ՀՀ պաշտպանության նախարարության և Հայաստանի գիտական հաստատությունների միջև՝ փորձելով Հայաստանում արտադրել թանկ և գիտատար ներդրում պահանջող այնպիսի զինատեսակներ, որոնք այժմ ներկրվում են արտասահմանից, այսինքն՝ կտրուկ ավելացնել հայրենի գիտության իջեցվող ռազմական պատվերների ծավալը: Սա համարում ենք նաև արտահանման ծավալների ավելացման և նոր սշխատատեղերի ստեղծման խիստ հեռանկարային ուղղություն:	Ընդունված չէ:	Առաջարկը ծրագրի հետ չի առնչվում, վերաբերվում է գիտության ոլորտին:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	14.Մշակել և ներդնել մեխանիզմներ, որոնք առավել շնորհալի ուսանողներին թույլ կտան իրենց ծառայությունը զինված ուժերում անցկացնել այնպիսի զորամիավորումներում կամ ռազմական արդյունաբերության գիտարար ոլորտներում, ուր հնարավոր կլինի առավել արդյունավետ օգտագործել նրանց գիտելիքները՝ հայկական բանակն առավել հզորացնելու ուղղությամբ:Ընդհանրապես անհրաժեշտ է բարելավել բարձրագույն կրթություն ստացած անձանց պարտադիր զինվորական ծառայության	Ընդունված չէ:	Զինվորական ծառայության արդյունավետության խնդիրը ծրագրի շրջանակներից դուրս է:

	արդյունավետությունը:		
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	15. Արմատական բարեփոխումներ իրականացնել ՀՀ գիտության կառավարման և համակարգման բնագավառում, ապահովել գիտության ֆինանսավորումը պետական բյուջեից՝ հատուկ մշակված 10-ամյա ռազմավարության շրջանակներում՝ 2020 թ-ին գիտության ֆինանսավորման մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնելով 3%-ի: Սա համարում ենք ապագայում Հայաստանի Հանրապետության մրցունակության և մարտունակության միակ գրավականը:	Ընդունված չէ:	Առաջարկը ծրագրի հետ չի առնչվում, վերաբերվում է գիտության ոլորտին:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	16.Պակասեցնել կրթության ոլորտում հարկային բեռը՝ միաժամանակ խստացնելով բոլոր ԲՈՒՀ-երի հանդեպ կիրառվող այն չափանիշները, որոնք վերաբերում են արդիական նյութատեխնիկական բազայով ապահովվածությանը, նորագույն արտասահմանյան գիտակրթական մեթոդաբանության ձեռքբերմանն ու ներդրմանը, դասախոսների վերապատրաստմանը, կրթության որակի ապահովմանն ուղղված այլ ցուցանիշներին: Կրթության բնագավառում հարկային բեռի թեթևացման արդյունքում ԲՈՒՀ-երում մնացող հավելյալ ֆինանսական միջոցները կուղղվեն գիտակրթական գործընթացի զարգացմանը, կրթությա որակի բարձրացմանը:		Հարկային արտոնությունները ամրագրված են ՀՀ համապատասխան օրենսդրությամբ:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	17.Ապագա մանկավարժների տեսական և գործնական պատրաստվածությունը ստուգելու նպատակով ներդնել ավարտական որակավորման անկախ քննությունների, միասնական պետական հանձնաժողով քննություններ կազմակերպելու միջոցով:	Ընդունված չէ:	Մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակով ստեղծված է համապատասխան անկախ կենտրոն: Ծրագրով նախատեսված է որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում, որի գործառույթները ներառում են նաև մանկավարժական կրթությունը:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան,	18.Ստեղծել ուսուցիչների որակավորման հստակ չափորոշիչներ, որոնց պահպանումն ու վերահսկողությունը պետք է իրականացնի ԿԳ	Ընդունված չէ:	Ծրագրով նախատեսված է

ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	նախարարությունը:		ներդնել եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան որակավորումների ազգային շրջանակ, ինչը ներառում է սույն առաջարկությունը:
Աժ պատգամավոր Անահիտ Բախշյան, ԺԽ-Ե-0323/11 **11/10913-11** 2011-05-31	19.4-րդ գլխի վերջին՝ «Կրթության զարգացման նպատակներն ու խնդիրները» վերնագրով 3)-րդ կետի բ. ենթակետում. «ներդնել կրթության արդյունքային ցուցանիշների վրա հիմնված ֆինանսավորման» բառից հետո ավելացնել «և արդյունավետության գնահատման» գործիքները:	Ընդունված է:	Ավելացված են «և արդյունավետության գնահատման» բառերը
Աժ պատգամավոր Լիլիթ Գալստյան, 02/10.5/2911-11 2011-03-02 **099/3865-11**	1. Ծրագրում գերակշռում են տեսական դրույթները, հստակ սահմանված չեն ակնկալվող արդյունքները: Սահմանված չէ միջոցառումների և գործողությունների պլանավորման ժամանակացույցը: Կառուցվածքային առումով այն բարդ է, կազմված է տարբեր բաղադրիչներից, անորոշ են այդ բաղադրիչների իրականացման պատասխանատուները:	ընդունված չէ	Ծրագրի 4-րդ և 8-րդ բաժիններում սահմանված են հստակ և չափելի նպատակներ և ծրագրի մոնիթորինգի ցուցանիշներ:
Աժ պատգամավոր Լիլիթ Գալստյան, 02/10.5/2911-11 2011-03-02 **099/3865-11**	2. Ծրագրի «2.2 Կրթության որակը և համապատասխանությունը» բաժնի 23-րդ կետում որակի բարելավման քաղաքականության մշակման կարևոր նախապայման է համարվում որակյալ տվյալների ստացման մեխանիզմների կատարելագործումը, այնինչ առավել կարևոր է կրթության որակի վրա ազդեցություն ունեցող գործոնների բացահայտումը և դրանց ազդեցությանաստիճանի գնահատումը:	Ընդունված չէ:	Ծրարգրի հիշյալ բաժնում 2.2.2. և 2.2.3 վերլուծված են կրթության որակի վրա ազդող հիմնական գործոնները:
Աժ պատգամավոր Լիլիթ Գալստյան, 02/10.5/2911-11 2011-03-02 **099/3865-11**	3.Ծրագրի «2.3. Կրթության ֆինանսավորումը և արդյունավետությունը» բաժնի 64-րդ կետում ամրացված է բուհերի պետպատվեր հասկացությունը, որը դեռևս 2008թ. փոխարինվել է ուսանողական նպաստներ հասկացությամբ, սակայն արմատական փոփոխություններ այս ոլորտում տեղի չեն ունեցել: Երկրում առկա չէ ուսանողական նպաստների արդյունավետ համակարգ, ուսանողը նպաստ ստանում է բուհական ընդունելության քննության արդյունքի հիման վրա՝ ուսման առաջին տարում, իսկ ուսման մյուս տարիներին ընթացիկ առաջադիմության հիման վրա: Փաստորեն, սոցիալապես անապահով խմբերի համար ապահովված	Ընդունված է մասամբ:	“Պետպատվեր” արտահայտությունը փոխարինվել է “պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում” արտահայտությամբ: Խմբագրվել է 60-րդ, 64-րդ կետերը և

	չէ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը: Անհրաժեշտ է վերանայել ուսանողական նպաստների հատկացման մեթոդաբանությունը:		Գծապատկեր 8-ը: Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի վերանայման խնդիրը արդեն իսկ առկա է:
ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան, 02/10.5/2911-11 2011-03-02 **099/3865-11**	4.Բուհական կրթության մատչելիության, հասանելիության խնդրի մեկ այլ ճանապարհ է ուսանողական վարկերի համակրգի ներդրումը: Անհրաժեշտ է ամրագրել մի համակարգ, որը կապահովի վարկավորում ուսման ընթացքում: Ուսանողական նպաստների ներկա համակրգի փոփոխությունը և ուսանողների վարկավորման համակարգի ներդրումը կմեծացնի բարձրագույն կրթության մատչելիությունն ու որակը:	Ընդունված է:	Ծրագրով նախատեսված բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ և կայուն համակարգը ենթադրում է նաև ուսանողական վարկերի համակարգի ներդրում: